Ա-70

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՍԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՅԵՐԸ ՖԱԹԻՄՅԱՆ ԵԳԻՊՏՈՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ /XI-XII ԴԴ./

Է.00.02 «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2010

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պ.գ.դ.,
պրոֆ. Ն.Հ. Հովհաննիսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր
Ա.Ա. Բոզոյան

պատմական գիտությունների թեկնածու
Վ.Ա. Տեր-Ղևոնդյան

Առաջատար կազմակերպություն՝

Խ. Աբովյանի անվան Պետական
Մանկավարժական Համալսարան

Պաշտպանությունը կայանալու է՝ 2010թ. մայիսի 24-ին, ժ. 13.00-ին ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 006 մասնագիտական խորհրդում /հասցե՝ 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24 գ/:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2010թ. ապրիլի 22-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝ պ.գ.թ. Ռ.Ղազարյան

ԱՌԱՋԱԲԱՆ

1. ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ֆաթիմյան Եգիպտոսում /969-1171թթ./ հայ վազիրների շուրջ հարյուրամյա կառավարման ժամանակահատվածը /1074-1162թթ./ պատմության մեջ մտել է որպես Եգիպտոսի «հայկական դարաշրջան»: Այդ յուրահատուկ պատմական դարաշրջանի ուսումնասիրությունն ունի թե՛ կարևոր գիտական, և թե՛ քաղաքական ու գործնական նշանակություն՝ միջնադարյան Եգիպտոսի և, հատկապես, հայ-արաբական բազմադարյան հարաբերությունների պատմության հետազոտման տեսանկյունից: Հայ վազիրները Ֆաթիմյան պետությունը սկսեցին կառավարել Մուսթանսիր խալիֆայի /1036-1094թթ./ գահակալությունից ի վեր: Նրանց շարքում հատկապես աչքի ընկան իսլամ ընդունած Բադր Ալ-Գամալի Ալ-Արմանին /1074-1094թթ./ և քրիստոնյա Բահրամ Ալ-Արմանին /1135-1137թթ./՝ Վահրամ Պահլավունին: Վերջինիս լիազոր-վազիր նշանակելով՝ Ֆաթիմյան խալիֆաները շրջանցեցին իսլամական իրավագիտությամբ ամրագրված այն սկզբունքը, համաձայն որի պետական բարձրաստիճան պաշտոնյաները պետք է լինեին իսլամադավան:

Ֆաթիմյան Եգիպտոսում հայ վազիրների կառավարման շրջանի ուսումնասիրությամբ ավելի տեսանելի է դառնում հայկական տարրի ծանրակշիռ դերակատարությունը, բացահայտվում են հայկական ռազմաքաղաքական ավանդույթների և մշակույթի ազդեցության առանձնահատկությունները միջնադարյան իսլամական հասարակության մեջ:

Հայ-արաբական, մասնավորապես՝ հայ-եգիպտական միջնադարյան հարաբերություններն անհնար է ճիշտ ըմբռնել առանց Ֆաթիմյան խալիֆայության պետական համակարգում հայ վազիրների գործունեության համապարփակ և բազմակողմանի լուսաբանման: Պատահական չէ, որ ուսումնասիրվող շրջանը, իրավամբ, համարվում է նաև եգիպտահայ գաղթօջախի ամենաբեղուն ժամանակահատվածներից մեկը: Հայազգի վազիրները ծանրակշիռ դեր խաղացին մի կողմից Ֆաթիմյան Եգիպտոսի քաղաքական և տնտեսական անկումը կասեցնելու, իսկ մյուս կողմից հայրենիքից արտագաղթած հայերի անվտանգությունն ապահովելու և իսլամական պետության մեջ նրանց /որպես էթնոդավանական փոքրամասնություն՝ ահլ ալ-զիմմի/ ներգրավելու հարցում:

Թեմայի արդիականությունն անմիջականորեն պայմանավորված է նաև միջինարևելյան տարածաշրջանում Հայաստանի Հանրապետության կարևոր գործընկերներից մեկի՝ Եգիպտոսի Արաբական Հանրապետության միջնադարյան պատմության, տվյալ դեպքում՝ Ֆաթիմյան պետության սոցիալ-տնտեսական հարաբերությունների, ինչպես նաև ներքին և արտաքին քաղաքական գործընթացների ուսումնասիրության կարևորությամբ:

2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության թեման ընտրվել է Ֆաթիմյան Եգիպտոսում /969-1171թթ./ հայ վազիրների կառավարման գրեթե հարյուրամյա շրջանի՝ 1074-1162թթ. ուսումնասիրության, երկրի կառավարման համակարգում նրանց խաղացած դերի, գործունեության առանձնահատկությունների, ինչպես նաև հայ վազիրների իշխանության շրջանում եգիպտահայ գաղթօջախի ամբողջական հետազոտումից ելնելով, որին հասնելու համար հեղինակն իր առջև դրել է հետևյալ խնդիրները.

- Գոյություն ունեցող սկզբնաղբյուրների և գիտական գրականության ուսումնասիրության հիման վրա ներկայացնել Եգիպտոսում Ֆաթիմյան խալիֆայության հաստատման ընթացքը:
- Դիտարկել Ֆաթիմյան Եգիպտոսում հայ վազիրների ինստիտուտի ձևավորման գործընթացը, և բացահայտել այդ ինքնատիպ երևույթի քաղաքական և սոցիալական պատճառները:
- Հետազոտել Բադր Ալ-Գամալի Ալ-Արմանիի /1074-1094թթ./՝ Ֆաթիմյան առաջին հայ վազիրի, ինչպես նաև նրա որդու՝ Աֆդալ Շահնշահ իբն Բադր Ալ-Գամալիի /1094-1121թթ./ գործունեությունը, քննության ենթարկել նրանց դերակատարումը Ֆաթիմյան պետության դիրքերի ամրապնդման և հզորացման գործում:
- Ուսումնասիրել 1122-1135թթ. Ֆաթիմյան խալիֆայության հայ վազիրներ Մուզաֆֆար իբն Բադր Ալ-Գամալիի, Ահմադ իբն Ալ-Աֆդալի /Աբու Ալի Քութայֆաթ/, Յանիս Ալ-Արմանիի կառավարման շրջանը:
- Դիտարկել հայ-առաքելական լիազոր-վազիր Վահրամ Պահլավունու կառավարման շրջանը /1135-1137թթ./ և դրա առանձնահատկությունները:
- Քննարկել վազիրներ Թալաի իբն Ռուզզիք Ալ-Արմանիի /1154-1161թթ./ և Ռուզզիք իբն Թալաիի /1161-1162թթ./ /Աբու Շուջաա Բադր Ադ-Դին/ սոցիալ-քաղաքական և մշակութային գործունեությունը:
- Հետազոտել հայ վազիրների ինստիտուտի և Ֆաթիմյան խալիֆայության անկման գործընթացը և դրան նպաստած գործոնները:
- Ներկայացնել եգիպտահայ գաղթօջախի սոցիալ-քաղաքական և մշակութային ընդհանուր իրավիճակը՝ հայ վազիրների կառավարման շրջանում:
- Դիտարկել Ֆաթիմյան խալիֆայության շրջանում հայկական եկեղեցիների ու վանքերի վիճակը՝ ընդհանուր գծերով ներկայացնելով նաև նշված ժամանակահատվածում Եգիպտոսում Հայ առաքելական եկեղեցու ծավալած գործունեությունը:
- Ֆաթիմյան Եգիպտոսի օրինակով լուսաբանել հայկական տարրի դերակատարությունը միջնադարյան իսլամական հասարակությունում:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության թեման՝ «Հայերը Ֆաթիմյան Եգիպտոսի պետական համակարգում /XI-XII դդ./», ընդհանուր առմամբ, դեռևս չի դարձել առանձին ուսումնասիրության առարկա: Ֆաթիմյան շրջանի մի քանի հայ գործիչների, մասնավորապես՝ Բադր Ալ-Գամալիի և Վահրամ Պահլավունու գործունեության որոշ ասպեկտներ քննարկվել են հայ /այդ թվում նաև՝ սփյուռքահայ/ և օտարազգի հետազոտողների աշխատություններում, սակայն ուսումնասիրվող ժամանակաշրջանում Եգիպտոսի միջնադարյան պատմության՝ մասնավորապես Ֆաթիմյան հարստության շրջանում հայ վազիրների գործունեության և երկրի ռազմաքաղաքական, հասարակական և մշակութային կյանքում նրանց դերակատարմանը վերաբերող ամբողջական ուսումնասիրություն առանձին աշխատանքով դեռևս չի կատարվել:

Ներկա աշխատությունն իր բովանդակությամբ և հարցադրումներով հայրենական արևելագիտության մեջ առաջին ուսումնասիրությունն է, որտեղ արաբական աղբյուրների և այլ գրականության լայն օգտագործմամբ փորձ է արվում համակողմանիորեն վերլուծել Ֆաթիմյան խալիֆայության շրջանում հայ վազիրների հարյուրամյա կառավարման ողջ շրջանը, հայազգի վազիրների գործունեության

առանձնահատկությունները, նրանց դերը Ֆաթիմյան Եգիպտոսի պետական համակարգում:

Գիտական նորույթ է ատենախոսությունում Աֆդալ Շահնշահի, և հատկապես՝ Մուզաֆֆար իբն Բադր Ալ-Գամալիի, Ահմադ իբն Ալ-Աֆդալի /Աբու Ալի Կութայֆաթ/, Յանիս Ալ-Արմանիի, Թալաի իբն Ռուզզիք Ալ-Արմանիի և Ռուզզիք իբն Թալաիի /Աբու Շուջաա Բադր Ադ-Դին/ ռազմաքաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային գործունեության բազմակողմանի հետազոտությունը:

4. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Ժամանակագրական առումով ատենախոսությունն ընդգրկում է Եգիպտոսում Ֆաթիմյան հարստության երկրորդ հարյուրամյակը՝ XI-XII դդ.: Այն ներառում է Ֆաթիմյան Եգիպտոսում հայ վազիրների կառավարման շուրջ հարյուրամյա՝ «հայկական շրջանը» /1074-1162թթ./, ուսումնասիրվող ժամանակաշրջանում Եգիպտոսի հայ գաղթօջախի պատմությունը, ինչպես նաև Ֆաթիմյան հարստության վերջնական անկումը /1171թ./:

5. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ատենախոսության մեթոդաբանական հիմքում դրված են Ֆաթիմյան Եգիպտոսում հայ վազիրների կառավարման շրջանի /1074-1171թթ./, վերջիններիս ղեկավարման առանձնահատկությունների, նրանց վարած ներքին և արտաքին քաղաքականության, Ֆաթիմյանների օրոք եգիպտահայ գաղթավայրին առնչվող գործընթացների հետ կապված հարցադրումների և տեսակետների քննական մեկնության և փաստերի համեմատական–համադրական վերլուծության սկզբունքները:

6.ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության մեջ առաջ քաշվող դրույթները, արված մեկնաբանությունները և եզրահանգումները կարող են օգտագործվել արաբական երկրների, մասնավորապես՝ Եգիպտոսի միջնադարյան պատմության, առհասարակ՝ միջնադարագիտությանը նվիրված հետազոտություններում և դասախոսություններում: Աշխատության դրույթները կարող են լայնորեն կիրառվել նաև հայ-արաբական, առավելապես՝ հայ-եգիպտական հարաբերությունների, այդ թվում՝ Միջին Արևելքի հայ գաղթավայրերին նվիրված ուսումնասիրություններում:

7.ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Արաբական երկրների բաժնում, նրա հիմնական դրույթներն ու եզրակացությունները լուսաբանվել են հեղինակի կողմից հրատարակված գիտական հոդվածներում, Երիտասարդ արևելագետների XXIX, XXX միջազգային գիտաժողովներում ընթերցված զեկուցումներում:

Հեղինակի հրատարակած հիմնադրույթների ու հոդվածների ցանկը ներկայացված է սեղմագրի վերջում:

8. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքը գրվել է հայերեն, արաբերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն լեզուներով աղբյուրների և ուսումնասիրությունների հիման վրա: Հետազոտությանը

նպաստել են հայ և օտարազգի հեղինակների՝ քննարկվող թեմային նվիրված արժեքավոր աշխատությունները, հոդվածները և մենագրությունները:

Ուսումնասիրության համար որպես սկզբնաղբյուր են ծառայել միջնադարյան մատենագիրների՝ Թակի Ադ-Դին Ահմադ Իբն Ալի Ալ-Մաքրիզիի /1364-1442թթ./[1], Իբն Խալլիքանի /1211-1282թթ./[2], Աբու Սալիհ Ալ-Արմանիի /12-13-րդ դարեր/[3], Իբն Ալ-Մույասսարի /1231-1278թթ./[4], Ջալալ Ադ-Դին Աս-Սույուտիի /1445-1505թթ./[5], Իբն Թաղրի Բիրդիի /1409-1470թթ./[6], Աբու Ալ-Աբբաս Ահմադ Ալ-Կալկաշանդիի[7] /1355-1418թթ./, Աբու Շամայի /1203-1267թթ./[8], Իբն Կալանիսիի /մ.1160թ./[9], Նասիր Խոսրովի /1003-1088թթ./[10], Իբն Խալդունի /1332-1406թթ./[11], Իբն Ալ-Ասիրի /1160-1233թթ./[12], Սաբատ իբն Ալ-Ջաուզիի /մ. 1256թ./[13] արժեքավոր աշխատությունները, որոնք մտնում են արաբական միջնադարյան պատմագրության ոսկե ֆոնդի մեջ:

Նշենք, որ արաբական աղբյուրները հարուստ տեղեկություններ են հաղորդում Ֆաթիմյան Եգիպտոսի կառավարման համակարգում ծանրակշիռ դերակատարություն ունեցած հայ վազիրների մասին: Սակայն ավելի սուղ և կցկտուր են նրանց տվյալները նշված ժամանակաշրջանի Եգիպտոսի հայ գաղթավայրի մասին: Թեմայի ուսումնասիրության տեսանկյունից արաբական աղբյուրներից ամենաարժեքավորն Ալ-Մաքրիզիի և Աբու Սալիհ Ալ-Արմանիի աշխատանքներն են, որոնք բավական հարուստ և արժեքավոր նյութ են պարունակում:

15-րդ դարի մամլուքյան պատմիչ Թակի Ադ-Դին Ալ-Մաքրիզիի գրչին է պատկանում «Գիրք հորդորանքի և խորհրդածության՝ նոր վայրերի և հնությունների հիշատակության մասին» /«Քիթաբ ալ-մավաիզ վա ալ-ի'թիբար ֆի զիքր ալ-խիտատ վա ալ-ասար»/ երկը, որը հայտնի է նաև «Ալ-Խիտատ» անվամբ: Դրանում տեղեկություններ կան ոչ միայն հայ վազիրների, այլև՝ եգիպտահայ գաղթավայրի մասին:

Միջնադարյան Եգիպտոսի քրիստոնյա եկեղեցիների և համայնքների համար բացառիկ արժեք է ներկայացնում ծագումով հայ Աբու Սալիհ Ալ-Արմանիի /նաև՝ Աբու Սալիհ Հայ, Աբուսահլ Հայ/ ձեռագիր աշխատությունը, որ գրված է եղել արաբերենով, և որի միակ ձեռագիր ընդօրինակությունը /1338թ./ գտնվում է

---

[1] تقي الدين أحمد إبن علي المقريزي ، كتاب المواعظ والاعتبار بذكر الخطط و الآثار، ج ١-٢-٣-٦، القاهرة، ١٩٠٨

[2] ابو العباس شمس الدين احمد بن محمد بن ابو بكر ابن خلكان، وفيات الاعيان انبا ابنا آلزمان، القاهرة، ٦-١، ١٨٤٩-١٩٥٠

[3] The Churches and Monasteries of Egypt and Some Neighbouring Countries, Attributed to Abu Salih the Armenian, Translated from the Original Arabic by B. Evetts, with Added Notes by Alfred J. Butler, Oxford, 1895.

[4] Ibn Muyassar, Annales d'Egypt /Les Khalifes Fatimides/, text Arabe, e'dite' par M.Henri Masse', Le Caire, 1919.

[5] جلال الدين السيوطي، كتاب حسن المحاضرة في أخبار في مصرو القاهرة، ج ٢-١، القاهرة ١٢٩٩

[6] جمال الدين ابو المحاسن يوسف بن تغري بردي، النجوم الزاهرة في ملوك مصرو القاهرة، ج ٥-٤، القاهرة، ١٣٥٣، ١٣٥٢

[7] ابو العباس احمد القلقشندي، كتاب صبح الأعش في كتابة الانشاء، ج ١-١٤، القاهرة، ١٩١٩-١٩١٤

[8] ابو شامة، كتاب الروضتين في أخبار الدولتين،جز، ٢-١، القاهرة، ١٢٨٨-١٢٨٧

[9] أبوعلي حمزة إبن القلانسي ذاهل طريق دمشق، بيروت، ١٩٠٨

[10] Насир-и Хусрау, Сафар–Намэ, пер. и прим. Е.Э. Бертельса, М.-Л., 1933.

[11] عبد الرحمن بن خلدون، كتاب العبر، ج ٤، بولاق، ١٣١١

[12] ١٩٣٥.الكامل في تاريخ، القاهرة، إبن الأثير، նաև՝ Իբն Ալ-Ասիր /թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագր. Ա. Տեր-Ղևոնդյանի/, Եր., 1981, /Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, XI, Արաբական աղբյուրներ, Բ/:

[13] سبط بن الجوزى، مرآة الزمان في تاريخ الاعيان،حيدرآباد، ج ١-٢، ١٩٥٢-١٩٥١

Փարիզում: Նշենք, որ Աբու Սալիհի աշխատության բնագիրը դարերի ընթացքում կորել է, որից 1348թ. պատճենահանվել է մի օրինակ /այն ներկայումս պահվում է Փարիզի Ազգային մատենադարանում/:

Աբու Սալիհը Եգիպտոսում գործող դպտի, եթովպական, ասորի և այլ աղոթատեղիների կողքին մեծ տեղ է հատկացրել հայ եկեղեցուն և համայնքին: Նա թվարկում է հայկական եկեղեցիների և վանքերի անունները, նշում դրանց գտնվելու վայրերը, տեղեկություններ է հաղորդում հայ հոգևոր առաջնորդների և հայազգի վազիրների, հայ գաղութի և հայ-եգիպտական հարաբերությունների մասին:

Աբու Սալիհի արժեքավոր այս ձեռագիրը 1895թ. Օքսֆորդի համալսարանի դասախոս Բ. Էվեթսը թարգմանել է անգլերենի: Նույն թվականին Մխիթարյան միաբանության անդամ Ղևոնդ Ալիշանն անգլերեն օրինակից առանձին գրքույկով հայերեն է թարգմանել հայերին վերաբերող հատվածները, որը երկրորդ անգամ հրատարակվել է 1935-ին[14]:

Ֆաթիմյան շրջանի եգիպտահայ գաղութի պատմության համար որպես սկզբնաղբյուր օգտագործվել են նաև միջնադարյան հայ պատմիչներ Մատթեոս Ուռհայեցու[15], Կիրակոս Գանձակեցու[16] և Սամվել Անեցու[17] աշխատությունները, որոնք որոշակի, բայց սուղ տեղեկություններ են հաղորդում Ֆաթիմյան Եգիպտոսում հաստատված հայերի մասին:

Նշենք, որ հետազոտության մեջ սկզբնաղբյուրային նշանակություն են ունեցել նաև Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի մի քանի հայկական ձեռագրեր և դրանց հիշատակարանները, որոնք Եգիպտոսի հայերի և ընդհանրապես հայ-արաբական հարաբերությունների մասին արժեքավոր տեղեկություններ են պարունակում: Ներկայումս, օրինակ, Մատենադարանում է պահվում Եգիպտոսից մեզ հասած հնագույն հայերեն ձեռագիրը՝ մագաղաթյա մի Ավետարան /թիվ 288/, որն ունի 280 թերթ: Այն գրված է 1099թ., Ալեքսանդրիայում, Ահարոնն կրոնավորի կողմից, պատվիրատուն ոմն Հովհաննեսն է: Հիշատակարանը /թթ. 75Բ, 278Բ-280Բ/ պահպանված է լրիվ՝ բացի վերջին մասից:

Խալիֆայության, ինչպես նաև միջնադարյան Եգիպտոսի, մասնավորապես Ֆաթիմյան շրջանի պատմության առանձին խնդիրներ, հատկապես՝ պետական համակարգը, արտաքին և ներքին քաղաքականությունը, տնտեսությունը, սոցիալական հարաբերությունները, ավելի ճիշտ հասկանալու տեսանկյունից կարևոր նշանակություն են ունեցել Իսլամի հանրագիտարանի առանձին հոդվածները[18], Օքսֆորդի համալսարանի վեց հատորանոց ուսումնասիրությունը[19], Լ.Սեմյոնովայի[20], Է. Բաթչերի[21], Ս.Լեն-Փուլի[22], Մ.Վան Բերխեմի[23], Գ.Վիեթի[24],

---

[14] Ապուսահլ Հայ, Պատմութիւն եկեղեցեաց եւ վանօրէից Եգիպտոսի, Վենետիկ, ս. Ղազար, 1935:

[15] Մատթեոս Ուռհայեցի, ժամանակագրություն: Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Հրաչ Բարթիկյանի, Եր., 1973:

[16] Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց: Թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Վարագ Առաքելյանի, Եր., 1982:

[17] Սամուէլի քահանայի Անեցւոյ, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893:

[18] The Encyclopaedia of Islam, New Edition, V. 1, Leiden, 1986, The Encyclopaedia of Islam, New Edition, V. II, Leiden, 1983.

[19] A History of Egypt, London, 1924-1936, Vol. I-VI.

[20] Л. Семенова, Из истории Фатимидского Египта, М., 1974.

[21] E.L.Butcher, The Story of Church in Egypt in two volumes, London, 1897.

[22] S. Lane-Pool, History of Egypt in the Middle Ages, London, 1936.

[23] M. Van Berchem, Me'mories publie's par les membres de la Mission Arche'ologique Francaise au Caire, Tome XIX, Fascicule IV, Corpus Inscriptionum Arabicarum, Premie're partie, Egypte, Paris, 1903.

[24] G.Wiet, Me'mories publie's par les membres de la Mission Arche'ologique Francaise au Caire, Tome 52-e, Corpus Inscriptionum Arabicarum, Le Caire, 1930.

Ֆ.Հիթթիի[25], Հ. Իբրահիմ Հասանի[26], Ա. Մաալուֆի[27] Պ.Սանդերսի[28], Լ. Ալ-Իմադի[29], Լ.Յաակովի[30], Գ.Համիլթոնի[31], Ս.Դենուայի[32], Հ.Գիբբի[33], Մ.Մինավիի[34], Ա.Մեցի[35], Ա.Մուշրիֆայի [36] աշխատությունները:

Հետազոտությանը զգալիորեն նպաստել են միջնադարյան իսլամական ճարտարապետության և մշակույթի, ինչպես նաև հայազգի վազիրների իրականացրած շինարարական գործունեության մասին արժեքավոր տեղեկություններ պարունակող Մ. Գ.Վիեթի, Ի.Բեյրմանի, Ա.Վիջդանի, Մ.Բրիգսի, Շ.Բոազի, Ք.Քրեզվելի, Օ.Գրեբերի[37], Ռ.Ադալյանի[38] աշխատությունները:

Իսլամի տեսական, դավանաբանական խնդիրներին, ինչպես նաև միջնադարյան իսլամի պատմությանը նվիրված առանձին հարցերի ուսումնասիրության համար հեղինակին մեծապես օգնել են Ի.Պետրուշևսկու[39], Ե.Բելյաևի[40], Բ.Լուիսի[41], Ա.Քիերիի[42] Ռ.Բալլիեթի[43] արժեքավոր աշխատանքները:

Ֆաթիմյան Եգիպտոսի կառավարման համակարգում բացառիկ դերակատարություն ունեցած հայ վազիրների մասին արժեքավոր տեղեկություններ և վերլուծություններ են պարունակում նաև Ա.Կապոյան-Կույումջյանի[44],

[25]P.Hitti, History of the Arabs, London, 1951.

[26]حسن إبراهيم حسن , الفاطميون في مصر,القاهرة, ١٩٣٢

[27]A. Maalouf, The Crusaders through Arab Eyes, New York, 1985.

[28]P. Sanders, The Fatimid State 969-1171, Vol. 1 "Islamic Egypt 640-1517" ed. by P. Carl F., Cambridge University Press, 1998/969-1172/, Berlin, 1990.

[29]L. S. Al-Imad, The Fatimid Vizerate /969-1172/, Berlin, 1990.

[30]L. Yaacov, State and Society in Fatimid Egypt, Leiden, 1991.

[31]G. Hamilton, The Caliphate and the Arab States, in A History of the Crusades, Kenneth M. Setton ed., Vol. 1, Madison, Wisconsin, 1969.

[32]S. Denoix, Les Premiers Siècles Arabes (641-1171), dans André Raymond et al "Caire", Paris, 2000.

[33]H.A.R. Gibb, The Damascus Chronicle of the Crusaders: Extracted and Translated from the Chronicle of Ibn al-Qalanisi, London, 1932.

[34]محمد حمدي المناوي، الوزا رة و الوزراء في العهد الفاطمي،القاهرة، ١٩٧٠

[35] А. Мец, Мусульманский ренесанс, М., 1966.

[36]عطية مصطفى مشرفة، الحكم في مصر الفاطميين،القاهرة، ١٩٥٠

[37]G. Wiet, Precis de l'historie d'Egypte, Le Caire, 1932; G. Wiet, Cairo: City of Art and Commerce, translated by Seymour Feiler, University of Oklahoma Press, 1964; I. Beirman, Art and Architecture in the Medieval Period, in The Cambridge History of Egypt, Vol. I, Islamic Egypt 640-1517, ed. Petry Carl F., Cambridge University Press, 1998; A. Wijdan, The Arab Contribution to Islamic Art (from the Seventh to the Fifteenth Centuries), American University of Cairo Press, 1999; M. Briggs, Architectures in The Legacy of Islam, ed. Th. Arnold and A. Guillaume, Oxford, 1943; Sh. Boaz, Popular Culture in Medieval Cairo, Cambridge University Press, 1993; K. A. Creswell, The Muslim Architecture of Egypt, Oxford, 1952, Vol. 1; O.Grabar, The Architecture of the Middle Eastern City from Past to Present: The Case of the Mosque, in Ira M. Lapidus ed. Middle Eastern Cities, Los Angeles, 1969.

[38]R. Adalian, The Armenians in Fatimid Egypt 1073-1186, A Military Colony, Research Paper as Course Requirement at UCLA, 1985.

[39]И. Петрушевский, Ислам в Иране VIII-IX вв., Л., 1966.

[40]Е. Беляев., Мусульманское сектантство, М. 1957.

[41]B. Lewis, The Origin of Ismailism. A Study of the Historical Background of the Fatimid Califate, Cambridge, 1940; B. Lewis, The Ismailites and the Assasins, - "A History of the Crusaders", vol.1, Philadelphia, 1955.

[42]A. Qyerry, Droit Musulman. Recueil des Lois Concernants les Musulmans Schyites, T. 1, Paris, 1871, p.342-452.

[43]R. W. Bulliet, Conversion to Islam in the Medieval Period, Harvard University Press, 1979.

[44]A. Kapoian-Kouymjian, L'Egypte Vue par des Arméniens, Paris, 1988.

Մ.Կանարդի[45], Ա.Տրիտտոնի[46], Ս.Դադոյանի[47], Ա.Մյուլլերի[48], Մ.Ֆաթիմիի[49], Ժ.Դեդեյանի[50], Լ. Տեր-Պետրոսյանի[51] աշխատանքները:

Ֆաթիմյան Եգիպտոսի, ինչպես նաև այդ շրջանի Եգիպտոսի հայ գաղթավայրի ու հայ-եգիպտական հարաբերությունների պատմությանը որոշակիորեն անդրադարձել են հայ արաբագետներ պրոֆ. Ն.Հովհաննիսյանը[52], Ա.Տեր-Ղևոնդյանը[53], ինչպես նաև Ա.Աբրահամյանը[54], Լեոն[55], Հ.Թուրշյանը[56], Հ.Թոփուզյանը[57] նաև՝ սփյուռքահայ հետազոտողներ Գ.Մըսրլյանը[58], Թ. արքեպիսկոպոս Գուշակյանը[59], Ա. Ալպոյաճյանը[60], Ն.Գ. Տեր-Միքայելյանը[61], Ս.Զեյթլյանը[62], Ա.Գարտաշյանը[63], Հ.Սուֆյանը[64], Գ.Հովհաննիսյանը[65], Ն.Աղազարմը[66]:

Հայ առաքելական եկեղեցու, Եգիպտոսում վերջինիս իրականացրած գործունեության, ինչպես նաև այդ շրջանի առանձին կրոնական գործիչների մասին արժեքավոր հիշատակություններ են պարունակում Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի[67], Ղ.Ալիշանի[68], Հր.Աճառյանի[69] աշխատանքները:

Եգիպտահայ գաղթավայրի պատմության վերաբերյալ արաբալեզու սկզբնաղբյուրների հրատարակության և ուսումնասիրության գործում անգնահատելի աշխատանք է տարել Գևորգ Մըսրլյանը, ով այդ աղբյուրներից քաղել է եգիպտահայության պատմությանը վերաբերող բազմաթիվ արժեքավոր տեղեկություններ: Իր հավաքած նյութերի մի մասը նա զետեղել է «Ականավոր հայեր Եգիպտոսի մեջ» գրքում /Կահիրե, 1947թ./, իսկ մյուսը, առանձին հոդվածներով,

[45]M. Canard, Un Vizir Chrétien à l'époque Fatimide: L'Armenien Bahram, Annales de l'Etudes Orientales, v. XII, Alger, 1954; Chronique de Michel le Syrien, ed. Trad. Par J. B. Chabot, v. III, Paris, 1963.

[46]A.S. Tritton, The Caliphs and Their Non-Muslim Subjects, London, 1970; A.S. Tritton, Theology and Philosophy of the Ismailis-JRAS, 1958.

[47]S. Dadoyan, The Fatimid Armenians: Cultural and Political Interaction in the Near East, Brill, 1997.

[48]А. Мюллер, История ислама с основания до навейших времен, пер. с немецкого од ред. Н.А. Медникова, т.II, СПб., 1895.

[49]Մ. Ֆաթիմի, Պատմութիւն եգիպտահայութեան, «Սիոն» ամսագիր, Երուսաղեմ, 1928թ., 1930թ.:

[50]G.Dedeyan, Les Armeniens Entre Grees, Musulmans et Croises. Etede Sur Les Pouvoirs Armeniens Dans Le Proche-Orient Mediterraneen /1068-1150/, Lisbonne, v.1, 2, Lisbonne, 2003.

[51]Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները և հայերը, Հ. Ա., Երևան, 2005:

[52]Ն.Հովհաննիսյան, Արաբական երկրների պատմություն, հ. I, Եր., 2003:

[53]Ա. Տեր-Ղևոնդյան, Վահրամ Պահլավունին Ֆաթիմյան խալիֆայության վեզիր, Հոդվածների ժողովածու, Եր., 2003, էջ 531-543:

[54]Ա.Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Բ. հատոր, Եր., 1967:

[55]Լեո, Պատմություն, Բ հատոր, Եր., 1947:

[56]Հ.Թուրշյան, XI և XII դարերի եգիպտահայ գաղութի պատմությունից, Արևելագիտական ժողովածու, հ. 2, Եր., 1964, էջ 301-317:

[57]Թոփուզյան Հ., էջեր եգիպտահայ հին գաղութի պատմությունից, «Էջմիածին» ամսագիր, օգոստոս, 1962:

[58]Գ.Մըսրլեան, Ականաւոր հայեր Եգիպտոսի մէջ, Գահիրէ, 1935:

[59]Թ. արք.Գուշակեան, Եգիպտոսի հայոց հին եւ արդի եկեղեցիները, Գահիրէ, 1927:

[60]Ա.Ալպոյաճեան, Պատմութիւն հայ գաղթականութեան, հայերու ցրումը աշխարհի զանազան մասերը: Ա. հատոր, Քրիստոէ առաջ Զ. դարէն մինչեւ ԺԱ դար Քրիստոսի, Գահիրէ, 1941: Բ.հատոր, Քրիստոսի ԺԱ դարէն մինչեւ Միջին Դարու վախճանը, Գահիրէ, 1955, նույնի՝ Արաբական Միացեալ հանրապետութեան Եգիպտոսի նահանգը եւ հայերը /սկիզբէն մինչեւ մեր օրերը/, Գահիրէ, 1960:

[61]Ն. Գ. Տէր-Միքայէլեան, Եգիպտահայ գաղութը 10-15-րդ դարերում, Պեյրութ, 1980:

[62]Ս.Զէյթլեան, Հայութեան ներդրումը վաղ միջնադարեան եւ արդի Եգիպտոսի պատմութեան մէջ, Կանադա, 2004

[63]Ա.Գարտաշեան, Նիրեր Եգիպտոսի հայոց պատմութեան համար, Գահիրէ, 1943:

[64]Հ.Սուֆեան, Եգիպտոսի հայ մամլուքներն ու իշխանները ֆաթիմյան շրջանին, Գահիրէ, 1928:

[65]Գ.Յովհաննէսեան, Եգիպտոսի պատմութիւնը սկիզբէն մինչեւ մեր օրերը, ճոխացուած ազգային պատմութեան դրուագներով, Գահիրէ, 1937:

[66]Ն.Մ.Աղազարմ, Նոթեր Եգիպտոսի հայ գաղութին վրայ, Գահիրէ, 1911:

[67]Մ. արք. Օրմանեան, Ազգապատում, Հայ ուղղափառ եկեղեցիոյ անցքերը սկզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, հ.Ա., Մայր աթոռ Ս. Էջմիածին, 2001:

[68]Ղ. Ալիշան, Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1873:

[69]Հ.Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա., Երևան, 1942:

հրատարակել «Սիոն» ամսագրում /1934թ., 1938թ./: Եգիպտոսի հայկական հուշարձանների և վիմագիր արձանագրությունների մասին արժեքավոր տվյալներ է հավաքել ու հրատարակել Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանը «Եգիպտահայոց հին և արդի եկեղեցիները» իր մենագրության մեջ /Կահիրե, 1927թ./: Եգիպտոսում վերջինիս կատարած դաշտային հետազոտությունն ավելի նյութական է դարձնում եգիպտահայ գաղութի ուսումնասիրությունը:

Եգիպտոսի հայ վաղիրների և որոշ չափով նաև եգիպտահայ գաղթավայրի մասին արժեքավոր հետազոտություն է կատարել Արշակ Ալպոյաճյանը՝ հենվելով միջնադարյան արաբ պատմիչների և նորագույն շրջանի արևմտյան պատմաբանների աշխատանքների վրա:

Եգիպտահայ գաղութի X-XV դդ. պատմության վերաբերյալ առանձնահատուկ հիշատակության է արժանի Նուպար Գ.Տեր-Միքայելյանի «Եգիպտահայ գաղութը 10-15-րդ դարերում» ուսումնասիրությունը, որտեղ հետազոտված են նշված ժամանակաշրջանի եգիպտահայ գաղթավայրին առնչվող բազմաթիվ շերտեր: Աշխատանքի արժանիքներից մեկն այն է, որ հեղինակն օգտագործել է շուրջ 3000 ձեռագիր նյութ՝ արաբերենով, անգլերենով, ֆրանսերենով, հայերենով՝ օգտվելով Եգիպտոսի թանգարանների և առանձին ինստիտուտների գրադարաններից ու արխիվներից: Հեղինակը Կահիրեում և շրջակա տարածքներում լուսանկարել և ուսումնասիրել է տեղի քրիստոնեական և իսլամական այն հուշարձանները, որոնք առնչվում են ուսումնասիրվող թեմային:

9. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է առաջաբանից, երեք գլուխներից, որոնցից յուրաքանչյուրը համապատասխանաբար կազմված է ենթաբաժիններից, վերջաբանից և օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

ԱՌԱՋԱԲԱՆՈՒՄ խոսվում է ատենախոսության թեմայի արդիականության, նպատակների ու խնդիրների մասին, հիմնավորվում է աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, տրվում է օգտագործված գրականության և աղբյուրների համառոտ տեսությունը, աշխատանքի մեթոդաբանական հիմքը և գիտական նորույթը:

Ատենախոսության ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽԸ՝ **«ՀԱՅ ՎԱՋԻՐՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՖԱԹԻՄՅԱՆ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ /1074-1135ԹԹ./»**, անդրադառնում է Եգիպտոսում Ֆաթիմյան խալիֆայության հաստատման գործընթացի, Ֆաթիմյան առաջին հայ վազիր Բադր Ալ-Գամալի Ալ-Արմանիի /1074-1094թթ./ և նրա որդու՝ Ալ-Աֆդալ Շահնշահ իբն Բադր Ալ-Գամալիի /1094-1121թթ./, 1122-1135թթ. վազիրներ Մուզաֆֆար բին Բադր Ալ-Գամալիի, Ահմադ իբն Ալ-Աֆդալի /Աբու Ալի Քութայֆաթ/, Յանիս /Հովհաննես/ Ալ-Արմանիի, ինչպես նաև հայ քրիստոնյա Վահրամ Պահլավունու /Բահրամ Ալ-Արմանի/ /1135-1137թթ./ կառավարման շրջանների ուսումնասիրությանը:

Գլխի առաջին ենթաբաժնում՝ «Ֆաթիմյան խալիֆայության ձևավորումը Եգիպտոսում», ներկայացվում է Եգիպտոսում Ֆաթիմյանների իշխանության հաստատման գործընթացը:

Եգիպտոսում Ֆաթիմյան խալիֆայությունը հիմնադրվեց 969թ. և գոյատևեց ընդհուպ մինչև 1171թ.: Ֆաթիմյան դինաստիան դավանում էր շիա իսլամի իսմայիլական ուղղությունը, ինչը մեծ դեր խաղաց 909 թվականից Հյուսիսային Աֆրիկայում /սկզբում՝ ներկայիս Թունիսի տարածքում/, ապա՝ Եգիպտոսում Ֆաթիմյան խալիֆայության /969-1171/ ձևավորման հարցում: Ֆաթիմյան պետության

գաղափարախոսության հիմքում ընկած էր ծայրահեղ շիական ուղղություններից մեկը՝ իսմայիլականությունը, որի ստեղծումը կապված է շիական վեցերորդ իմամ Ջաֆար Աս-Սադիկի /մ. 765թ./ անվան հետ /ով դեռևս իր կենդանության օրոք յոթերորդ իմամ նշանակեց իր կրտսեր որդուն՝ Մուսա Ալ-Քազիմին՝ իմամությունից զրկելով ավագ որդուն՝ Իսմայիլին: Այդ հանգամանքն ի հայտ բերեց դժգոհություն՝ ձևավորելով իսմայիլականների թևը: Հետագայում պառակտվեցին նաև իսմայիլականները. նրանց շրջանում ի հայտ եկած ֆաթիմյան իսմայիլականները Մուհամմադի դստեր և Ալիի կնոջ՝ Ֆաթիմայի անունը վերցնելով՝ ձգտում էին ընդգծել իրենց ուղղակի կապը մարգարեի տոհմի և Ալիի հետ:

Հյուսիսային Աֆրիկան թիրախ դարձնելու ֆաթիմյան իսմայիլականների մտադրությունները պատահական չէին: Աբբասյան խալիֆայության թուլացման և տրոհման հետևանքով Հյուսիսային Աֆրիկայում առաջացել էին համապատասխան դինաստիաների կողմից կառավարվող անկախ պետական կազմավորումներ, որոնք ի վիճակի չէին դիմադրել որևէ կազմակերպված և հզոր ուժի՝ նրանցում սկիզբ առած ներքին պառակտությունների և տեղական բնակչության, մասնավորապես՝ բերբերների դժգոհությունների հետևանքով: 910-ից Մաղրիբում իրենց գերիշխանությունը հաստատելով՝ Ֆաթիմյանները հետամուտ էին խալիֆայության սահմանների հարաճուն ընդարձակմանը՝ առաջին հերթին նկատի ունենալով ռազմավարական առումով հանգուցային նշանակություն ունեցող Եգիպտոսը, որը վիճակված էր գրավել Ալ-Մուիզզ խալիֆային /953-975թթ./: Նրա հարյուրհազարանոց բանակը տաղանդավոր զորահրամանատար, ծագումով հայ Զոհարի գլխավորությամբ 969թ. գրավեց մայրաքաղաք Ֆուստատը: Ֆաթիմյաններն այդպիսով գահընկեց արեցին Եգիպտոսը կառավարող Իխշիդյան դինաստիային /935-969թթ./: 973թ. հիմնվեց մայրաքաղաք Կահիրեն, որը միջնադարի արաբ հայտնի գիտնական Իբն Խալդունը «Ումմ ադ-դունյա»՝ «Աշխարհի քաղաքամայր» անվանեց: Եգիպտոսը նվաճելուց չորս տարի անց, 973թ., Ալ-Մուիզզը տեղափոխվեց Կահիրե /արաբ.՝ Ալ-կահիրա, բառացի՝ հաղթության քաղաք/՝ իր հետ վերցնելով նախնիների աճյունները: Օգտվելով Աբբասյանների թուլացումից՝ Ֆաթիմյաններին հաջողվեց հետագայում նվաճել նաև Սիրիան, Արաբիան, Իրաքի որոշ շրջաններ, Հիջազը՝ Մեքքայով և Մադինայով՝ ստեղծելով մի հզոր և ընդարձակ պետություն, որը ձգվում էր Ատլանտյան օվկիանոսից մինչև Կարմիր ծովի ափերը: Ֆաթիմյանների օրոք կառավարությունն ավելի նպաստավոր դիրք գրավեց երկրի կրոնադավանական փոքրամասնությունների նկատմամբ: Նրանք ազատ էին կրոնական գործերում, զբաղեցնում էին կարևոր պաշտոններ պետական կառավարման համակարգում, ակտիվ էին տնտեսության մեջ և այլ բնագավառներում: Ֆաթիմյան խալիֆայության գոյության առաջին հարյուրամյակը եղավ նրա վերընթաց զարգացման և քաղաքական ու տնտեսական հզորության շրջանը, ամրապնդվեցին նրա միջազգային դիրքերը: Սակայն Հաքիմ խալիֆայի /996-1021թթ./ գահակալության շրջանում Ֆաթիմյան պետությունը սկսում է քաղաքականորեն և տնտեսականորեն թուլանալ, որն իր գագաթնակետին է հասնում Ալ-Մուսթանսիր խալիֆայի /1036-1094թթ./ օրոք և դրան հաջորդած շրջանում:

Գլխի երկրորդ ենթաբաժնում՝ «Բադր Ալ-Արմանին /1074-1094թթ./՝ Ֆաթիմյան առաջին հայ վազիր», քննության է ենթարկվում Բադր Ալ-Գամալիի կառավարման տարիներին Եգիպտոսում տեղի ունեցած զարգացումները:

1073թ. ֆաթիմյան Ալ-Մուսթանսիր խալիֆան գերությունից ազատ արձակված և Աքքա քաղաքի կառավարիչ հայազգի Բադր Ալ-Գամալիին օգնության կանչեց՝ կանխելու բանակում առկա խռովությունները, քաղաքական խլրտումները և սովի

հետևանքով քայքայման եզրին հայտնված երկրի փլուզումը: Բադրը Եգիպտոս հասավ երեք հազարանոց անձնական բանակով, որը, մեծամասամբ, կազմված էր հայերից: Որոշ աղբյուրների համաձայն՝ հայկական բանակի թիվը հասնում էր տաս հազարի:

1060թ. մինչև 1066թ. խալիֆան երկրում նշանակել էր քանյոթ վազիր, սակայն հուզող խնդիրները լուծում չէին ստացել: Մինչդեռ Բադր Ալ-Գամալին կարճ ժամանակում հաջողեց զսպել բանակում առկա հակասությունները, իրեն ենթարկեց պարագլուխներին և կարգ ու կանոն հաստատեց երկրում: Նրա քաղաքական դիրքերի ամրապնդմանը նպաստեց անձնական /մեծամասամբ հայերից բաղկացած/ հեծյալ և հետևակ զորագնդերի առկայությունը: Բադրը դրանք հիմնականում համալրում էր հայ գաղթական նորակոչիկներով՝ վստահ լինելով վերջիններիս հավատարմության մեջ: Փաստորեն, Ալ-Գամալիի ջանքերով ստեղծվեց հայկական զորամիավորումը՝ «Զույուշիան», որ կարելի է անվանել նաև կտրիճների զորագունդ: Բադրն այն տեղավորեց Կահիրեի հյուսիսում գտնվող Հուսեյնիե ընդարձակ արվարձանում, որտեղ վերաշինեց ավերված մի եկեղեցի և տրամադրեց հայերին: «Զույուշիայի» զինվորները բարձր դիրք էին գրավում եգիպտական հասարակության շրջանում մինչև Ֆաթիմյան հարստության անկումը:

Ներքաղաքական անկայունությունը հաղթահարելու համար Բադր Ալ-Գամալին բանակի բարձրաստիճան զինվորականներին պարգևահողեր /իկտա/ տրամադրեց: Դիվանագետ վազիրը գիտակցում էր, որ իր հենարանը հանդիսացող հայկական զինյալ ուժերի համար հողատիրությունը հաջողության և հեղինակության ավանդական գրավականն էր:

Հատկանշական է, որ Եգիպտոսի սոցիալ-տնտեսական իրավիճակի կայունացման համար Բադրը մի շարք բարեփոխումներ իրականացրեց: Նա շահեկան պայմաններ ստեղծեց արտաքին և ներքին առևտրի ակտիվացման համար՝ շահելով առևտրականների վստահությունն ու բարեհաճ վերաբերմունքը: Նրա հեռատես քաղաքականության արդյունքում պետական եկամուտները կրկնապատկվեցին և խարխլված ֆաթիմյան իշխանությունն ամրապնդվեց: Երկրի պետական հասույթը Բադրի օրոք մինչև 3 մլն. դինարի բարձրացվեց:

Երկրի տնտեսության առողջացման ուղղությամբ մյուս կարևոր քայլերից մեկը Բադր Ալ-Գամալիի և նրա հետևորդների իրականացրած շինարարական գործունեությունն էր: 1086թ. Եդեսիայի անկումից հետո Եգիպտոս հայ գաղթականների նոր ալիքի հետ այստեղ հաստատվեցին երեք շինարար վարպետներ, որոնք էլ Կահիրեի երեք նշանավոր դարպասների՝ Բաբ Ալ-ֆութուհ /Նվաճումների դարպաս/, Բաբ Ան-նասր /Հաղթանակի դարպաս/ և Բաբ Զուեյլայի հեղինակներն են: Դրանք կանգուն են մինչ օրս: Առաջին երկուսը կառուցվեցին 1087թ., երրորդը՝ 1092թ.: Փաստորեն, Բադր Ալ-Գամալիի վազիրության շրջանում հայկական շինարարության ավանդույթները լայնորեն օգտագործվեցին Եգիպտոսի կառույցներում:

Ներքին խնդիրների լուծմանը զուգահեռ հայազգի վազիրն ուշադրություն դարձրեց նաև արտաքին խնդիրներին, որտեղ ամենամեծ վտանգը սելջուկներից էր, որոնք ԺԱ դարի 40-50-ականներին սկսեցին իրենց արշավանքները: 1077-1078թթ. Բադրը գրավեց Դամասկոսը, 1089-1093թթ. վերագրավեց Աքքան, Սուրը /Տիր/, Սաիդան /Սիդոն/ և Բիբլոսը, սակայն չկարողացավ գրավել Երուսաղեմը: Այնուամենայնիվ, Բադրին հաջողվեց Եգիպտոսի համար պաշտպանական գոտի ստեղծել պաղեստինյան հատվածում:

Բադր Ալ-Գամալիի վազիրության քսանամյա շրջանը ոչ միայն Ֆաթիմյան հարստությունը փրկեց քայքայումից, այլ նաև ձևավորեց խալիֆայության երկրորդ

հարյուրամյակը: Ինչպես Բադրի, այնպես էլ նրան հաջորդող վազիրների անուններին կցվեց Ալ-Արմանի մակդիրը, որը բնորոշում էր նրանց հայկական ծագումը: Աշխարհիկ հայացքներ ունեցող Բադր Ալ-Գամալին սկիզբ դրեց մեծամասամբ հայ վազիրների հարյուրամյակին, որոնք Եգիպտոսում ունեին բացարձակ իշխանություն:

Նա կրում էր Ամիր Ալ-Զույուշի /զորքերի հրամանատար/ Կադի Ալ-Կուդաթի /գերագույն դատավոր/ և մի շարք բարձրագույն այլ կոչումներն:

Գլխի երրորդ ենթաբաժնում՝ «Աֆդալ Շահնշահ իբն Ալ-Գամալին /1094-1121թթ./՝ երկրի փաստացի կառավարիչ», ուսումնասիրվում է Աֆդալ Շահնշահի իրականացրած ներքին և արտաքին քաղաքականությունը:

1094թ. Բադր Ալ-Գամալիին իր պաշտոնում փոխարինեց նրա որդին՝ Աֆդալը, որն իր պաշտոնավարման քսանյոթ տարիների ընթացքում, հոր օրինակով, իր ձեռքում կենտրոնացրեց Եգիպտոսի ռազմական և քաղաքական իշխանությունը: Նա առաջին հերթին ուշադրությունը կենտրոնացրեց երկրի ռազմական ներուժի ուժեղացման վրա:

Ներքին խռովությունները կանխելու նպատակով Աֆդալի օրոք առաջին անգամ կազմավորվեց անվտանգության գաղտնի ծառայություն: Որոշ արաբ պատմաբաններ վկայում են, որ վազիրի մայրը ևս Ասիաբ ալ-խաբարի կամ Տեղեկությունների հավաքման ծառայության անդամ էր և ծածուկ շրջում էր Կահիրեի փողոցներով և տեղեկություններ հավաքում:

Աֆդալը մեծ ջանքեր գործադրեց երկրի տնտեսական կյանքն աշխուժացնելու համար: Գյուղացիներին բաժանվեցին հողեր և սերմնացու, երաշխավորվեց տուրքերի և հարկերի արդար հավաքումը:

Հետաքրքրություն է ներկայացնում նաև Աֆդալի վարած արտաքին քաղաքականությունը, որի կարևոր ուղղություններից մեկը վերաբերում էր խաչակիրներին: Խաչակիրների առաջին արշավանքն Արևելք սկսվեց 1096թ., իսկ 1098թ. խաչակիրները գրավեցին Անտիոքն ու Եդեսիան: 1098թ. սեպտեմբերին Ֆաթիմյանները սելջուկներից գրավեցին Երուսաղեմը: Երուսաղեմից վերադառնալուց առաջ Աֆդալը Ասկալոնում մի հոյակապ վկայարան /մաշհադ/ կառուցեց և այնտեղ տեղափոխեց Մուհամմադ մարգարեի թոռ՝ Հուսեյնի գլուխը: Այն հետագայում Կահիրե տեղափոխեց մեկ այլ հայազգի վազիր՝ Թալաի իբն Ռուզզիքը: Սակայն Աֆդալի ջանքերն ի զորու չեղան զերծ պահել խալիֆայությունն արտաքին նվաճումներից: 1099թ. մայիսի 19-ին խաչակիրները գրավեցին խալիֆայության հյուսիսային սահմանը՝ Նահր Ալ-Կալբը՝ Հյուսիսային Լիբանանի Շունին գետը, ապա նաև ծովեզերյա քաղաքները և մոտեցան Երուսաղեմին: Թեև քաղաքի եգիպտացի կառավարիչն իսկույն դիմադրություն ցույց տվեց, սակայն մինչև Ալ-Աֆդալի օգնության հասնելը ստիպված եղավ անձնատուր լինել: Հայազգի վազիրը, ով իր հավատքին նվիրված շիա էր, մի շարք արշավանքներ կազմակերպեց Երուսաղեմը հետ նվաճելու նպատակով, սակայն չհաջողեց: 1099թ. խաչակիրները Ֆաթիմյաններից գրավեցին Երուսաղեմը՝ սրի քաշելով 70 հազար մուսուլմանների և Երուսաղեմը դարձրեցին իրենց թագավորության մայրաքաղաքը: Հետագա մի քանի տարիների ընթացքում խաչակիրների տիրապետության տակ անցավ սիրիական ծովափը՝ Բեյրութը, Տարտուսը, Աքքան, Տրիպոլին, Յաֆֆան, 1124-ին՝ Տիրը: Պաղեստինում Ֆաթիմյանների միակ հենակետը մնաց Ասկալոնը, որը հանձնվեց միայն 1153թ.: Այսպիսով, 12-րդ դարի կեսին Ֆաթիմյան պետության սահմանները սահմանափակվում էին միայն Եգիպտոսով:

Ալ-Մուսթանսիր խալիֆայի մահվանից հետո վազիրն իրեն այնքան ազդեցիկ էր համարում, որ համարձակվեց փոխել խալիֆայի հաջորդականության կարգը.

խալիֆայի ավագ որդին՝ Նիզարն, անհետացավ, իսկ խալիֆա հռչակվեց նրա քրոջ տասնութամյա որդին՝ Ալ-Մուսթաալի Բիլլահը, ով գահակալեց շուրջ վեց տարի: Հայտնի է, որ Աֆդալի միջամտությամբ գահակալության կարգի խախտումն ու դրա հետևանքով նիզարականների խռովությունները սրեցին ներքաղաքական պայքարը, որի հետևանքով հայազգի վազիրը սպանվեց 1121թ.:

Արաբական աղբյուրները բազմաթիվ տեղեկություններ են հաղորդում Աֆդալի հարստությունների մասին: Նրա մահից հետո երկու ամիս պահանջվեց իր ունեցվածքը խալիֆայի պալատ փոխադրելու համար:

Գլխի չորրորդ ենթաբաժինը՝ «Հայ կառավարիչները Ֆաթիմյան խալիֆայությունում /1122-1135թթ./՝ Մուզաֆֆար բին Բադր Ալ-Գամալի, Ահմադ իբն Ալ-Աֆդալ /Աբու Ալի Քութայֆաթ/, Յանիս /Հովհաննես/ Ալ-Արմանի», լուսաբանում է 1122-1135թթ. Ֆաթիմյան խալիֆայության հայ վազիրներ Մուզաֆֆար իբն Բադր Ալ-Գամալիի, Ահմադ իբն Ալ-Աֆդալի /Աբու Ալի Կութայֆաթ/, Յանիս Ալ-Արմանիի կառավարման շրջանը:

Բադր Ալ-Գամալիին և Աֆդալ Շահնշահին հաջորդել են նույնպես հայազգի վազիրներ, որոնք պատմական դեր են ստանձնել Ֆաթիմյան Եգիպտոսի կառավարման համակարգում, սակայն նրանց մասին պատմական տեղեկությունները բավական սուղ են: Աֆդալին հաջորդել է եղբայրը՝ Բադր Ալ-Գամալիի որդին՝ Մուզաֆֆար բին Բադր Ալ-Գամալին /Զաաֆարը/, որն իր դիրքով և ունեցած կշռով զիջում էր Աֆդալին: Մուզաֆֆարը մի քանի անգամ փոխանորդաբար զբաղեցրեց վազիրի պաշտոնը, երբ Աֆդալը բացակայում էր Կահիրեից: Նրա անունով կոչվեց Կահիրեի հրապարակներից մեկը: Մուզաֆֆարը սպանվեց իր ծառայի ձեռքով, 1120թ.:

Աֆդալի սպանությունից հետո Ամիր խալիֆան ոչ միայն առգրավեց նրա հարստությունը, այլ նաև բանտարկեց նրա ընտանիքի անդամներին, որոնց շարքում՝ նաև Աֆդալի որդի Ահմադին /Աբու Ալի Քութայֆաթ/: Երբ սպանվեց Ամիր խալիֆան, երկրում զինվորականներն ապստամբություն բարձրացրին, որի հետևանքով բանտից ազատ արձակված Ահմադն անմիջապես իրեն վազիր հռչակեց: Նա շուրջ մեկ տարի վայելում էր վեհապետի բոլոր արտոնությունները. նա նույնիսկ մզկիթներում փոխեց ուրբաթօրյա աղոթքի /խուտբա/ ձևը: Խուտբայից դուրս մղված Հաֆիզ խալիֆայի անվան փոխարեն սկսեց հիշատակվել իր անունը: 1131թ. Հաֆիզի կողմնակիցները դավադրաբար սպանեցին նրան: Դավադիրների պարագլուխն էր Հաֆիզի կողմնակիցներից Յանիս անունով մի հայ, որն էլ ստանձնեց վազիրի պաշտոնը:

Չնայած իր կարճաժամկետ պաշտոնավարմանը՝ Քութայֆաթը ևս ցուցաբերեց իր գերդաստանին հատուկ ղեկավարման հմտություններ՝ ընդգծված հոգածություն ցուցաբերելով քրիստոնյաների՝ հատկապես հայերի նկատմամբ:

1132թ. Ալ-Հաֆիզ խալիֆան վազիր նշանակեց Ալ-Գամալիների նախկին ստրուկ, էմիրի աստիճան ստացած փառասեր Յանիս /Հովհաննես/ Ալ-Արմանիին: Վերջինս որպես ստրուկ ծառայում էր Աֆդալի պալատում, որի աջակցությամբ հասավ էմիրի աստիճանի, այնուհետև դարձավ խալիֆայի պալատի վերակացու, սակայն դավաճանեց իր բարերարի որդուն: Յանիս Ալ-Արմանին իր խստության և անզիջող բնավորության պատճառով մեծ դժգոհություն առաջացրեց իր անձի նկատմամբ և հազիվ ինն ամիս պաշտոնավարելուց հետո դավադրության զոհ դարձավ:

Գլխի հինգերորդ ենթաբաժնում՝ «Վահրամ Պահլավունի /Բահրամ Ալ-Արմանի/՝ Ֆաթիմյան վազիր /1135-1137թթ./», քննարկվում է հայ-առաքելական

լիազոր-վազիր Վահրամ Պահլավունու կառավարման շրջանը /1135-1137թթ./ և դրա առանձնահատկությունները:

Միջնադարյան իսլամի պատմության առումով բացառիկ երևույթ է Ֆաթիմյան պետության մեջ հայ քրիստոնյա իշխան Վահրամ Պահլավունու՝ լիազոր-վազիր կամ մեծ վազիր լինելու հանգամանքը: Հաֆիզ խալիֆայի օրոք /1130-1149թթ./ Վահրամ Պահլավունին Եգիպտոսի Ղարբիե /Դելտայում/ նահանգի կառավարիչն էր: Երկրում անիշխանություն էր տիրում. Հաֆիզի որդին ապստամբել էր հոր դեմ: Վահրամ Պահլավունին իր գնդերով հայտնվեց Կահիրեում և խալիֆան, ով արդեն երկու տարի ղեկավարում էր առանց վազիրի, 1135թ. մարտի 30-ին վազիրության շքազգեստը /խիլա/ շնորհեց ձեռնահաս հայ զորավարին: Իսլամական ավագանին դեմ էր Վահրամ Պահլավունու /Բահրամ Ալ-Արմանի/ վազիր դառնալուն: Հավանաբար մուսուլմանների շրջանում նրան լեգիտիմացնելու համար խալիֆան Վահրամ Պահլավունուն շնորհել էր «իսլամի սուր և պետության թագ» տիտղոսը:

Սակայն Վահրամ Պահլավունուն հարկավոր էր վստահելի հենարան և նա Կիլիկիայից և Եփրատացվոց աշխարհից հրավիրեց իր ազգականներին ու բազմաթիվ հայ զինվորականների: Արդյունքում, հայերի թիվը Եգիպտոսում աճեց և շուտով կազմավորվեց քսան հազարանոց հայկական զորաբանակ, որի ծախսերը պետական գանձարանն էր հոգում: Վահրամի եղբայրը՝ Վասակը, Վերին Եգիպտոսի Կուս նահանգի կառավարիչ նշանակվեց: Վարչական ու զինվորական պաշտոններ ստացան նաև Վահրամի եղբորորդիները՝ Վասիլն ու Շահանը: Պետական պաշտոններում հայերի թիվը հասավ 2.000-ի:

Մի շարք պատմաբանների վկայությամբ՝ հենց խալիֆայի թուլտվությամբ էր, որ Պահլավունին իր հայրենի կալվածքներից՝ Հալեպից հյուսիս գտնվող հայաբնակ Թել-Բաշիրից և Կիլիկիայից Եգիպտոս հրավիրեց իր ազգականներին, որոնք էլ իրենց հետ բերեցին մոտ 30.000 հայ քրիստոնյաների: Վահրամը հավատարիմ և վստահելի համախոհների կարիք ուներ՝ ներքաղաքական իրավիճակը կայունացնելու և իր դիրքերն ամրապնդելու համար:

Սակայն Պահլավունու ձեռնարկած քայլերը հակառակ ազդեցությունն ունեցան: Հայության թվաքանակի արագ ավելացումը և վայելած պետական հովանավորությունն առաջացրեցին ոչ միայն դժգոհություն, այլև կասկածներ հայ վազիրի նպատակների վերաբերյալ: Առաջին անգամ Եգիպտոսում սկզբնավորվեց հակահայկական մի հոսանք, որի նպատակն էր պալատական դավադրությամբ երկիրն ազատել քրիստոնյա վազիրից:

Նշենք, որ բացի ընդհանուր ոչ նպաստավոր տրամադրություններից, հակասություններ էին ձևավորվել Հաֆիզ խալիֆայի և նրա հայազգի քրիստոնյա վազիրի միջև: Մեծաթիվ հայ զինվորականների ու պաշտոնյաների առկայությունը խալիֆայի մեջ մտավախություն առաջ բերեցին՝ կապված պետության կառավարման համակարգում հայկական տարրի առավել ներգրավվման և դրանից բխող հնարավոր վտանգների հետ: Այդ պատճառով ամիրապետն օգնության կանչեց Ղարբիեի նահանգապետ հայ Ռիդուան իբն Վալախշիին ու նրա միջոցով հեռացրեց Վահրամին: Վահրամը ստեղծված իրավիճակում 1137թ. փետրվարի 4-ին նախընտրեց հրաժարվել վազիրի պաշտոնից և հեռացավ Կահիրեից: Նա ստիպված էր որոշ ժամանակ ապաստան գտնել Դամասկոսի մոտակայքում, ապա հատուկ արտոնությամբ հաստատվեց Վերին Եգիպտոսի Սոհակ քաղաքի հարավ-արևմուտքում գտնվող հայկական Ճերմակ վանքում /Դեյր Ալ-Աբիադ/:

Արդեն վազիրի պաշտոնում Ռիդուանը հայերի դեմ կատաղի հալածանք սկսեց: Սակայն շուտով Հաֆիզը գիտակցեց, որ Վահրամ Պահլավունու հեռացումը բացասաբար է անդրադարձել ինչպես պետական գործերի, այնպես էլ՝

ներքաղաքական վիճակի վրա: Նա պալատից հեռացրեց ծայրահեղական տարրերին և Վահրամին նշանակեց իր խորհրդականի պաշտոնում: Հայերի նկատմամբ հալածանքներին վերջ դնելու ակնկալիքով՝ Վահրամը վերադարձավ պալատ: Հաֆիզ խալիֆային հաջողվեց հրահրել Ռիդուանի հակառակորդների ապստամբությունը: Մեկ ու կես տարի անց՝ 1140թ. դեկտեմբերի 7-ին Վահրամ Պահլավունին մահացավ: Արաբ պատմիչների վկայությամբ՝ նրա մահվան առիթով Հաֆիզ խալիֆան, ով խորապես սգում էր Պահլավունու մահը, հրամայեց պետական հաստատությունները փակել երեք օրով:

Եգիպտացի ժամանակակից պատմաբան Մուհամմադ Համդի Մինավիի կարծիքով՝ սկսած Ազիզ խալիֆայից, երբ վազիրության ինստիտուտը ձևավորվեց մինչև Ֆաթիմյանների իշխանության անկումը, Եգիպտոսում պաշտոնավարել են 65 վազիրներ, որոնցից 55-ը՝ մուսուլման, 10-ը՝ զիմմի: Մուսուլմաններից 29-ը՝ իսմաիլական, 6-ը՝ իմամական, որոնց էին նաև հայ վազիրներ Բադր Ալ-Գամալին, Աֆդալը, Ահմադը և Թալաի իբն Ռուզզիքը ու նրա որդի Ռուզզիքը/, 8-ը՝ սուննի, իսկ մնացածների դավանական պատկանելությունը հայտնի չէ: 10 զիմմիներից 7-ը քրիստոնյա էին, 3-ը՝ հրեա: Ահա այդ քրիստոնյա վազիրներից մեկն էլ Վահրամ Պահլավունին էր:

Ընդհանրապես, Ֆաթիմյան խալիֆայությունում /ինչպես նաև իսլամական այլ պետություններում/ կար վազիրության երկու տեսակ՝ սոսկ գործադիր իշխանություն ունեցող վազիր /վազիր թանֆիզ/ և լիազոր-վազիր /վազիր թաֆուիդ/, որը երկիրը կառավարում էր ինքնիշխան կերպով, որպես միահեծան տիրակալ: Միջնադարյան իսլամի պատմության մեջ Վահրամ Պահլավունին թերևս միակ քրիստոնյա լիազոր-վազիրն էր: Եթե Ֆաթիմյանները խախտել էին շարիաթի այն սկզբունքը համաձայն որի զիմմիները չէին կարող լինել հասարակության լիիրավ անդամներ, ապա Հաֆիզ խալիֆան շրջանցել էր նույնիսկ Ֆաթիմյանների օրոք սահմանված պետական կարգը:

Ատենախոսության ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽԸ՝ **«ՖԱԹԻՄՅԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ ԵՎ ՀԱՅ ՎԱԶԻՐՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՎԱՐՏԸ»**, նվիրված է Թալաի իբն Ռուզզիք Ալ-Արմանիի /1154-1161թթ./ և նրա որդու՝ Ռուզզիք իբն Թալաիի /Աբու Շուջաա Բադր Ադ-Դին/ /1161-1162թթ./ ռազմաքաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային գործունեության բազմակողմանի հետազոտությանը, ինչպես նաև Ֆաթիմյան խալիֆայության անկման գործընթացի լուսաբանմանը:

Գլխի առաջին ենթաբաժնում՝ «Թալաի իբն Ռուզզիք Ալ-Արմանին /1154-1161թթ./՝ Ֆաթիմյան ռազմաքաղաքական և մշակութային գործիչ» ուսումնասիրվում է Թալաի իբն Ռուզզիքի վազիրության շրջանում Եգիպտոսում տեղի ունեցած զարգացումները:

Բադր Ալ-Գամալիի վազիրության շրջանից ութսուն տարի անց Ռշտունյաց աշխարհից ևս մեկ հայ, որն աչքի էր ընկել իր վարչարարական և ռազմական կարողություններով, ինչպես նաև իր բանաստեղծական տաղանդով՝ Մինիեի նահանգապետ Թալաի իբն Ռուզզիք Ալ-Արմանին, 1154թ. Ալ-Ֆայեզ խալիֆայի /1154-1160/ կողմից նշանակվեց վազիրի պաշտոնում: Թալաի Իբն Ռուզզիքը Եգիպտոսում ստացել էր պալատական կրթություն, հմտացել զինվորական գործի մեջ: Այնուհետև որոշ ժամանակ զբաղեցրել էր Վերին Եգիպտոսի Մինիե նահանգի նահանգապետի պաշտոնը՝ հող նախապատրաստելով իր վազիրության համար:

Նրա նահանգապետության շրջանում երկրում կրկին սրվեց ներքաղաքական վիճակը, որն ուղեկցվում էր արտաքին ուժգնացող սպառնալիքներով: Խաչակիրներն արդեն հայտնվել էին Եգիպտոսի սահմանների մոտ: Ստեղծված պայմաններում պալատական կանայք, որոնք տեղյակ էին զարգացումներից,

օգնություն խնդրեցին իբն Ռուզզիքից: Անսալով իշխանուհիների խնդրանքին՝ նա իր զինվորներով շարժվեց դեպի Կահիրե: 1154թ. Թալաի իբն Ռուզզիքը, ով շիա իմամական էր, դարձավ Ֆայեզ խալիֆայի առաջին վազիրը:

Թալաի իբն Ռուզզիքն ուներ քաջ և վճռական ղեկավարի համբավ, նրան անվանում էին նաև Ալ-Մալիք Ալ-Սալիհ /բարեպաշտ թագավոր/: Վերջինս նախ վերականգնեց երկրի ներքին խաղաղությունը, ապա վերահաստատեց քրիստոնյա փոքրամասնությունների իրավունքները: Իբն Ռուզզիքի քաջալերանքով հայ առևտրականներն ու արհեստավորներն ակտիվ մասնակցություն ունեցան երկրի արտաքին առևտրի և արհեստների զարգացման գործում: Իբն Ռուզզիքն իր դիրքերն ամրապնդելու նպատակով պաշտոնների նշանակեց իր երկու որդիներին, եղբորը, եղբորորդուն, քեռորդուն և փեսային: Նա արտաքին ճակատում անխնա պայքար ծավալեց խաչակիրների դեմ, սակայն վճռական հաղթանակներ չկարողացավ տանել: Թալաի իբն Ռուզզիքը մոտավորապես յոթ տարի վարեց վազիրի պաշտոնը: Թալաին գրեթե միանձնյա ղեկավարեց Եգիպտոսը, քանի որ նրա վազիրության շրջանում միմյանց հաջորդած Ֆայեզ և Ադիդ խալիֆաներն անչափահաս էին և հեղինակություն չունեին:

1160թ., երբ երիտասարդ տարիքում մահացավ Ալ-Ֆայեզ խալիֆան, Թալաի իբն Ռուզզիքը նրա ինանմյա զարմիկին՝ Ալ-Ադիդին /1160-1171թթ./, ով Ֆաթիմյան հարստության վերջին գահակալն էր, հռչակեց խալիֆա և իր աղջկան կնության տվեց նրան՝ դրանով ամրապնդելով իր դիրքերը, սակայն հաջորդ տարում սպանվեց: Խստաբարո բնավորության պատճառով նա չկարողացավ շահել պալատականների հարգանքը: Հակասություններ առաջացան նույնիսկ նրա և փեսայի միջև: Իբն Ռուզզիքի ճնշող ազդեցությունից ազատվելու նպատակով էր, որ Ալ-Ադիդ խալիֆայի կողմից կազմակերպված դավադրության արդյունքում 1161թ. վերջինս սպանվեց:

Թալաի իբն Ռուզզիքն այն բացառիկ վազիրներից էր, ով զգալի դեր խաղաց երկրի կրթական և մշակութային կյանքում: Նրա նախաձեռնությամբ համալրվեց խալիֆայի պալատում գտնվող 40 սենյակ զբաղեցնող և 100.000 կտոր գրականություն պարունակող գրադարանը, 1005թ. հիմնված «Գիտելիքների տունը» /«Դար Ալ-Ուլում»/ վերածվեց ուսումնական հաստատության, քաջալերվեց նաև գիտական աշխատանքը: Ֆաթիմյան հարստության անկումից հետո գրքերի վերոնշյալ բացառիկ հավաքածուն աճուրդի հանվեց. մի մասը կողոպտվեց, իսկ մի մասն էլ ցրվեց: Թալաին իր պալատում ստեղծել էր գիտական մի կաճառ, որտեղ երեկոյան հավաքվում էին պալատական, պետական և մշակութային գործիչներ՝ գրական, կրոնական և գաղափարական տարբեր խնդիրներ քննարկելու նպատակով: Իբն Ռուզզիքն ինքն էլ օժտված էր բանաստեղծական տաղանդով: Նրա գրչին է պատկանում բանաստեղծությունների երկհատոր «Դիվանը», որը մեզ չի հասել: Բարեբախտաբար, իբն Ռուզզիքի բանաստեղծություններից հատվածներ է արտագրել Իբն Խալլիքանն իր «Անհետացած երևելիներ» գրքում: Ռուզզիքի գրչին է պատկանում «Համառներին պատասխանելու հենարան» կրոնական գիրքը, որի շուրջ նա քննարկումներ կազմակերպեց իսլամական տեսաբանների հետ: Այն ներառում է զրույցներ Ալի իբն Աբու Տալիբի իմամության և դրա մասին գրի առնված մարգարեական ավանդությունների մասին:

Թալաի իբն Ռուզզիքի գործունեությունը մեկ անգամ ևս փաստում է, որ հայերը միջնադարում բավական ազդեցիկ դերակատարություն են ունեցել Միջին Արևելքի երկրների քաղաքական, տնտեսական ու մշակութային զարգացումներում:

Գլխի երկրորդ ենթաբաժնում՝ «Ռուզզիք իբն Թալաին /1161-1162թթ./՝ Ֆաթիմյան խալիֆայության վերջին հայ վազիր: Ֆաթիմյան խալիֆայության անկումը»

վերլուծվում է Ֆաթիմյան վերջին հայ վազիր Ռուզզիք իբն Թալաիի գործունեությունն ու Ֆաթիմյան խալիֆայության անկման գործընթացը:

Թալաի իբն Ռուզզիք Ալ-Արմանիին հաջորդեց նրա որդին՝ Ռուզզիք իբն Թալաին՝ Աբու Շաջաա Բադր Ադ-Դինը /1161-1162թթ./, ով ստացավ Ալ-Ադիլ /Արդարամիտ/ մականունը: Արաբ պատմիչ Թաղրի Բիրդին վկայում է, որ արդարամիտ Ռուզզիք իբն Թալաին վարչապետության պաշտոնը զբաղեցրեց 15 ամիս և վայելեց ժողովրդի սերն ու համակրանքը, քանի որ փորձում էր թեթևացնել հարկային բեռը: Ռուզզիք իբն Թալաիի անձնական անվտանգությունն ապահովում էր հայ սպաներից և շարքային զինվորներից բաղկացած զորագունդը, որից 3000-ը հեծյալներ էին՝ արաբ զորավարի հրամանատարությամբ:

Նրա պաշտոնավարման շրջանում իրավիճակը բարդ էր ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության ոլորտում: Խաչակիրները նպատակ ունեին Եգիպտոսում հաստատել քրիստոնյա կառավարում: Բացի խաչակիրներից, այդ շրջանում Եգիպտոսում ցանկանում էին իրենց դիրքերն ամրապնդել նաև սելջուկները, որոնք իրենց հերթին նպատակադրվել էին հյուծել Ֆաթիմյան շիական իշխանությունն ու հաստատվել Եգիպտոսում: Սելջուկները Եգիպտոսում իրենց թուրքմեն և քուրդ գործակալների միջոցով հրահրում էին բանակային ըմբոստություններ ու երկպառակություններ:

Ներքաղաքական անկայունությունը, որ պայմանավորված էր նաև արտաքին գործոնով, կործանարար եղավ վազիր Ռուզզիք իբն Թալաիի համար, ով չկարողացավ հաղթահարել ո՛չ ներքին, ո՛չ արտաքին դժվարությունները: Նա չուներ հոր վարչարարական կարողություններն ու քաջությունը: Հակառակ հոր հորդորներին՝ Ռուզզիքն անխոհեմաբար պաշտոնանկ արեց քուրդ էմիր Շավարին, ով զբաղեցնում էր Կուսի նահանգապետի պաշտոնը: Վերջինս բավական ազդեցիկ գործիչ էր և զգալի զինված ուժեր ուներ իր տրամադրության տակ: Իր պաշտոնաթողության լուրն իմանալով՝ Շավարը զինված ուժերով շարժվեց Կահիրեի ուղղությամբ: Այդ մասին տեղեկանալով՝ Ռուզզիք իբն Թալաին փախուստի դիմեց, սակայն շուտով հայտնաբերվեց և բանտարկվեց, ապա Շավարի հրահանգով 1163թ. գլխատվեց: Իբն Թալաիի գահընկեցությամբ ավարտվեց հայազգի Ռուզզիք ընտանիքի շուրջ իննամյա կառավարումը Եգիպտոսում, ինչպես նաև վերջ դրվեց 1074-1162թթ. ձգվող Ֆաթիմյան խալիֆայության «հայկական շրջանին»:

1162թ. էմիր Շավարը ստանձնեց վազիրի պաշտոնը, սակայն չկարողացավ կայունացնել ո՛չ ներքին, ո՛չ արտաքին քաղաքական իրավիճակը: Հազիվ ինն ամիս պաշտոնավարելուց հետո Շավարը 1163թ. պաշտոնանկ արվեց, վտարվեց երկրից և ստիպված էր օժանդակություն խնդրել Հալեպի և Մոսուլի տիրակալ աթաբեկ Նուր Ադ-Դին Զանգիից՝ խոստանալով նրան գումար և հողատարածքներ: Հոր օրինակին հետևելով և խաչակիրների հետ շարունակական պատերազմի մեջ գտնվող Նուր Ադ-Դինը, հաշվի առնելով խաչակիրների, մասնավորապես՝ Երուսաղեմի տիրակալ ֆրանկ Ամալրիկ Ա. թագավորի՝ այլևս թուլացած Եգիպտոսը գրավելու մտադրությունները, ինչպես նաև նկատի ունենալով այն փաստը, որ խաչակիրներին 1164-ին ի վերջո հաջողվեց գրավել Միջերկրականի Ֆաթիմյան վերջին քաղաքը՝ Ասկալոնը, և անջրպետ ստեղծել Եգիպտոսի և Սիրիայի միջև /որպես հարմար առիթ օգտագործելով Շավարի խնդրանքը/ իր հրամանատարներից քուրդ Շիրքուհին՝ տաս հազար զինվորների ուղեկցությամբ, ուղարկեց Եգիպտոս՝ նպատակ հետապնդելով վերահաստատել Շավարին իր պաշտոնում, ձախողել խաչակիրների ծրագիրը՝ ամրացնելով դիրքերը Եգիպտոսում՝ ընդդեմ Ֆաթիմյանների: 1164թ. Նուր Ադ-Դինն իր թուրքական և քրդական տարրերից կազմված զորքերն ուղարկեց Եգիպտոս: Արդյունքում, Շավարը նորից իշխանության անցավ, սակայն դրժեց Նուր

Ադ-Դինին տված խոստումը՝ դաշնակցելով Ամալրիկ Ա. հետ, ով գտնվում էր եգիպտական ծովափնյա շրջաններում: Պայքարը Նուր Ադ-Դինի և ֆրանկների միջև ընթանում էր փոփոխական հաջողությամբ: Շիրքուհի հրամանատարությամբ Զանգիների բանակը երեք արշավանք /1166թ., 1167թ., 1169թ./ կատարեց դեպի Եգիպտոս, որտեղ Ֆաթիմյանների իշխանությունը վերջնականորեն թուլացել էր: 1168թ., երբ խաչակիրները կրկին շարժվեցին Եգիպտոսի ուղղությամբ, Ալ-Ադիդ խալիֆան /1160-1171թթ./ անձամբ օգնություն խնդրեց Նուր Ադ-Դինից: 1169-ի սկզբին Շիրքուհն իր եղբոր որդու՝ Սալահ Ադ-Դինի հետ շարժվեց դեպի Եգիպտոս, իսկ խաչակիրները ստիպված եղան նահանջել: Փաստորեն, Նուր Ադ-Դինին հաջողվեց անմիջական վերահսկողություն հաստատել Եգիպտոսում: 1169թ. Շավարը մահապատժի ենթարկվեց, իսկ խալիֆայի կողմից վազիր նշանակվեց Ասադ Ադ-Դին Շիրքուհը: Կարճ ժամանակամիջոցում նոր վազիրն իր համախոհներին նշանակեց վարչական պետական պաշտոններում և Ֆաթիմյան բանակային ըմբոստությունները ճնշելով՝ դարձավ երկրի բացարձակ տիրակալը, սակայն շատ չանցած մահացավ: 1169թ. Սալահ Ադ-Դինին հաջողվեց շահել Ալ-Ադիդ խալիֆայի վստահությունը և դառնալ նրա վազիրը՝ երկրի կառավարումը վերցնելով իր ձեռքը: 1171-ին, Ֆաթիմյան վերջին՝ քսանամյա հիվանդ Ալ-Ադիդ խալիֆայի մահվանից հետո Սալահ Ադ-Դինը թույլ չտվեց որևէ մեկին գահ բարձրանալ: Դեռևս նախքան նրա մահանալը երկար դադարից հետո առաջին անգամ Սալահ Ադ-Դինի հրամանով Կահիրեում ուրբաթօրյա աղոթքի՝ խուտբայի ընթացքում սկսեց հիշատակվել Աբբասյան խալիֆայի՝ Ալ-Մուսթադիի /1170-1180/ անունը, ինչը նշանակում էր Եգիպտոսի վերադարձ սուննիականությանը: Խալիֆայի մահվանից հետո Սալահ Ադ-Դինը վերջ դրեց Ֆաթիմյան խալիֆայության վերջին հավատարիմ ուժին՝ «հայ կտրիճների» զորագունդը՝ տապալելով Ֆաթիմյան 262-ամյա իշխանությանը:

Ատենախոսության ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽԸ՝ **«ԵԳԻՊՏԱՀԱՅ ԳԱՂԹՕՋԱԽԸ ՖԱԹԻՄՅԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ»**, անդրադառնում է Ֆաթիմյանների օրոք Եգիպտոսում հայերի հաստատմանը նպաստած գործոններին, եգիպտահայ գաղթավայրի սոցիալ-քաղաքական ընդհանուր իրավիճակին, հայերի թվաքանակին և բնակության վայրերին, տնտեսության առանձին ոլորտներում հայերի ներգրավվածությանը, Հայ առաքելական եկեղեցու, մասնավորապես Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի՝ Եգիպտոսում ծավալած գործունեությանը, ինչպես նաև հայ եկեղեցիներին ու վանքերին:

Գլխի առաջին ենթաբաժինը՝ «Եգիպտահայ գաղթօջախի սոցիալական-քաղաքական ընդհանուր վիճակը Ֆաթիմյանների օրոք», քննության է առնում Ֆաթիմյանների օրոք Եգիպտոսում հայ համայնքի սոցիալական և քաղաքական վիճակը, հայերի նկատմամբ պետության, ինչպես նաև հայ վազիրների վերաբերմունքը:

Հայ-եգիպտական հարաբերությունները սկզբնավորվել են պատմական վաղ ժամանակաշրջանում, էական նշանակություն ձեռք բերել Եգիպտոսի բյուզանդական և ապա՝ արաբական տիրապետության շրջանում: Հայերի հոսքը Եգիպտոս մեծ թափ է ստացել Ֆաթիմյանների օրոք, առավել աշխուժացել մասնավորապես հայ վազիրների կառավարման շրջանում, երբ վերջիններս արտոնել և շատ դյուրություններ են ստեղծել Եգիպտոսում իրենց հայրենակիցների հաստատման համար: Ֆաթիմյան Եգիպտոսում հայերի հաստատվելու հիմնական պատճառներից մեկը կապված էր Հայաստանում տիրող իրավիճակի հետ: Ժ-ԺԱ դարերի ընթացքում հայոց պետականության կորուստը, ապա սելջուկյան ավերիչ արշավանքները, նպաստեցին, որպեսզի Հայաստանի ողջ մնացած բնակչության զգալի մասը հեռանա

հայրենիքից դեպի ապահով վայրեր: Հայերի մի մասը Եգիպտոսում հաստատվեց ապահովություն և աշխատանք գտնելու հեռանկարով: Հայերի մեկ այլ զանգված Եգիպտոս ժամանեց որպես զինվորական՝ ծառայելու հայազգի վազիրներին և արաբ խալիֆաներին: Եվ վերջապես հայերի երրորդ մասը Կիլիկիայից և այլ բնակավայրերից Եգիպտոս տարվեց որպես ռազմագերի, որոնց թիվը երբեմն հասնում էր տասնյակ հազարների: Այդ շերտերն էլ կազմեցին եգիպտահայ գաղթօջախը:

Եգիպտոսում հայ համայնքի աշխուժացմանն էապես նպաստեց հայերի նկատմամբ Բադր Ալ-Գամալիի և նրան հաջորդած հայազգի վազիրների խիստ բարյացկամ վերաբերմունքը: Մասնավորապես Բադրի օրոք քրիստոնյա հայ համայնքին հատկացվեցին և նրա համար կառուցվեցին բազմաթիվ վանքեր և եկեղեցիներ: Հայազգի վազիրները հայ գաղթականներին ապահովում էին աշխատանքով, բնակության վայրով: Նրանք, որպես զիմմիներ, վայելում էին պետության հովանավորությունը: Ըստ Մատթեոս Ուռհայեցու՝ 11-րդ դարի վերջին եգիպտահայ գաղութի թիվը հասել է մոտավորապես երեսուն հազարի: Կան առանձին հետազոտողներ, ովքեր նշում են, թե հայերի թիվը նշված ժամանակահատվածում 30.000-ից ավելի է եղել:

Եգիպտոսում հաստատված հայերը սոցիալական առումով բազմաշերտ էին: Նրանց մեջ կային հողագործներ, շինարարներ, արհեստավորներ, առևտրականներ և այլ մասնագիտություն ունեցող մարդիկ: Սոցիալական ամենաբարձր խավի ներկայացուցիչները հայ վազիրներն էին, ովքեր հսկայական հողային տարածքներ և այլ հարստություններ ունեին, նաև՝ վերջիններիս հավատարիմ հայ զինվորականները, ովքեր, որպես պարգև, ստանում էին հողակտորներ /իկտա/:

Եգիպտահայերի զգալի մասը կենտրոնացած էր մեծ քաղաքներում, ինչպես օրինակ՝ Կահիրեում, Ալեքսանդրիայում, Թեբեում, Իտֆիհում և այլն, որտեղ գտնվում էին հայկական գլխավոր վանքերն ու եկեղեցիները, իսկ ավաններում և գյուղերում կային միայն փոքր չափի աղոթավայրեր:

Հատկանշական է, որ հայկական տարրի ներկայությունը պետական համակարգում և հասարակության մեջ, մասնավորապես՝ Աֆդալի և Վահրամ Պահլավունու կառավարման շրջանում, երկրում ի հայտ բերեցին որոշակի հակահայկական տրամադրություններ: Արդեն Ֆաթիմյանների անկումը և Այյուբյանների դինաստիայի հաստատումը ճակատագրական եղան եգիպտահայերի համար, քանի որ համայնքի գոյությունը դադարեց: Ինչպես իրավամբ նշում է ժամանակակից արաբ պատմաբան Մուհամմադ Ռիֆաաթ Ալ-Իմամը, եգիպտահայ համայնքը Ֆաթիմյանների օրոք ապրեց մի ծաղկուն ժամանակաշրջան:

Գլխի երկրորդ ենթաբաժնում՝ «Եգիպտոսի հայ եկեղեցիներն ու վանքերը», վերլուծության է ենթարկվում Եգիպտոսում Հայ առաքելական եկեղեցու գործունեությունը, նկարագրվում են հայկական եկեղեցիներն ու վանքերը, ուրվագծվում է հայ համայնքի անկումը:

Եգիպտոսում հայ համայնքի աշխուժացմանը և ինստիտուցիոնալացմանը էականորեն նպաստեց Բադր Ալ-Գամալիի աջակցությամբ Հայոց կաթողիկոս Գրիգոր Վկայասերի՝ 1070-ականների կեսերին Եգիպտոս կատարած այցելությունը: Այդ մասին արժեքավոր տեղեկություններ են հաղորդում ոչ միայն արաբ, այլև հայ պատմիչները, մասնավորապես՝ Մատթեոս Ուռհայեցին և Կիրակոս Գանձակեցին: Գրիգոր Վկայասերին Եգիպտոսում ջերմ ընդունելության է արժանացրել Մուսթանսիր խալիֆան և առաջարկել իր աթոռը փոխադրել Եգիպտոս: Խալիֆան առաջարկում է իր դռները լայնորեն բացել հայության առաջ և իր երկիրը բնակեցնել հայերով: Սակայն Գրիգոր Վկայասերը մերժում է խալիֆայի խնդրանքը՝

պատճառաբանելով, որ չի կարող իր հոտն անտեր թողնել և մնալ հեռավոր Կահիրեում, որտեղ հոտ չունի: Սակայն տեսնելով օրեցօր աճող հայ համայնքը՝ Գրիգոր Վկայասեր կաթողիկոսն իր քրոջ որդուն՝ Գրիգորիսին, ով շրջագայում էր իր հետ, 1076թ. եպիսկոպոս է ձեռնադրում: Այդպիսով, Գրիգորիսը /Ֆաթիմյան հայազգի լիազոր-վազիր Վահրամ Պահլավունու եղբայրը և Ներսես Շնորհալու հորեղբայրը/, որին աղբյուրներն անվանում են թե՝ պատրիարք, թե՝ կաթողիկոս, ընդհուպ մինչև 1117թ. եղել է եգիպտահայերի հոգևոր առաջնորդը:

Ունենալով սերտ կապեր իշխանության հետ՝ եգիպտահայերի առաջնորդը ներկայացնում էր հայ համայնքն ու նրա շահերը պետական մարմինների առաջ, կարգավորում հայերի հետ կապված քաղաքացիական խնդիրները՝ այդպիսով վարելով համայնքի թե՝ հոգևոր, թե՝ քաղաքական ղեկավարի պաշտոնը: Բադր Ալ-Գամալիի և նաև՝ Գրիիգոր Վկայասեր կաթողիկոսի համատեղ ջանքերի շնորհիվ հայ եկեղեցին Եգիպտոսում իր ուրույն տեղը զբաղեցրեց քրիստոնյա այլ՝ ղպտի, հակոբիկ, նեստորական, մելիքիտ եկեղեցիների կողքին:

XI-XII դարերում հայերը Եգիպտոսում ունեին շուրջ երեսուն վանք, եկեղեցի և մատուռ: Հայկական եկեղեցիների մի մասը նախկինում պատկանել են ղպտիներին և հայերին են հանձնվել ծագումով հայ վազիրների շնորհիվ:

Եգիպտոսում հայ եկեղեցիների և վանքերի մասին ամենահավաստի աղբյուրը ծագումով հայ արաբ պատմիչ Աբու Սալիհ Ալ-Արմանիի «Եգիպտոսի եկեղեցիների ու վանքերի պատմությունը» աշխատությունն է, որտեղ հիշատակված են բազմաթիվ հայ եկեղեցիների ու վանքերի անուններ: Դրանից են՝ Ս. Հակոբ, Ս. Հովհաննես Մկրտիչ, Դեյր Ալ-Խանդակի Ս.Գևորգ, Տուրայի Ս. Գևորգ, Ս.Մինաս, Ս. Գրիգոր, Վադի Հաբիբի, Զուհրի եկեղեցիները, Ճերմակ վանքը, Ս.Գևորգ վանքը, նաև՝ Գալուսանայի, Շինարայի, Խուսուսի եկեղեցիները և այլն: Շատ հետազոտողներ կարծում են, որ ֆաթիմյան Եգիպտոսում գոյություն ունեցող հայկական ոչ բոլոր եկեղեցիների ու վանքերի մասին են պահպանվել տեղեկություններ:

Փաստորեն, եգիպտահայ գաղթավայրը Ֆաթիմյան խալիֆաների դրական վերաբերմունքի, նաև՝ այդ շրջանում Եգիպտոսի կառավարման համակարգում հայ վազիրների ունեցած բացառիկ դերակատարության շնորհիվ մեծ ծաղկում ապրեց: Հայերն ազատորեն դավանում էին իրենց կրոնը, Եգիպտոսի տարբեր շրջաններում գործում էին հայկական վանքեր ու եկեղեցիներ, որոնցից շատերն ունեին իրենց վանական դպրոցները, ուր պատրաստում էին հոգևորականներ: Վերջիններս հետագայում ծառայում էին գաղթավայրի վանքերում, եկեղեցիներում և սրբատեղիներում: Վանական դպրոցներում միաժամանակ զարգանում էր հայ գրչագրությունն ու մանրանկարչությունը: Սակայն «հայկական շրջանից» և, ընդհանրապես, Ֆաթիմյան դինաստիայի անկումից հետո հայերը ենթարկվեցին հալածանքների, հայկական վանքերն ու եկեղեցիները փակվեցին, բռնագրավվեցին կամ էլ հանձնվեցին ղպտիներին: Ստեղծված պայմաններում Եգիպտոսի հայ համայնքի առաջնորդը 1172թ. ստիպված է լինում թողնել իր նոսրացած թեմը և հեռանալ Երուսաղեմ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ մեջ ամփոփված են աշխատանքի հիմնական արդյունքները: Ֆաթիմյան խալիֆայության շրջանը /909-1171թթ./ միջնադարի արաբական պատմության կարևոր փուլերից մեկն է: Այն առաջին հերթին հետաքրքիր է իսմայիլական պետության, նրա վարած ներքին և արտաքին քաղաքականության, պետական համակարգի, սոցիալ-տնտեսական հարաբերությունների և հասարակության կառուցվածքի ուսումնասիրման առումով: Մասնավորապես հայ արևելագիտության համար նշված թեման կարևոր է ոչ միայն արաբագիտական հետազոտությունների, այլև՝ հայ-արաբական, մասնավորապես՝

հայ-եգիպտական միջնադարյան հարաբերությունների ուսումնասիրման տեսանկյունից:

Ֆաթիմյան Եգիպտոսի պատմությունն անքակտելիորեն կապված է հայ տարրի և մշակույթի հետ, ինչն իրավամբ կարելի է համարել հայ-արաբական պատմամշակութային փոխառնչությունների ամենահիշարժան դրսևորումներից մեկը: Ֆաթիմյան պետության գործադիր իշխանությունը շուրջ 100 տարի /1074-1162թթ./ հայ վազիրների ձեռքում էր, ինչը բացառիկ երևույթ էր միջնադարյան իսլամական պետության մեջ:

1070-ականներին Ֆաթիմյան հարստության համար ստեղծված ճգնաժամային փուլում Ալ-Մուսթանսիր խալիֆայի կողմից Եգիպտոս հրավիրված Աքքայի հայ կառավարիչ Բադր Ալ-Գամալիին /ում հետագայում խալիֆայի կողմից շնորհվեց գործադիր իշխանության ղեկավարի կամ վազիրի պաշտոնը/ հաջողվեց կասեցնել Ֆաթիմյան խալիֆայության կործանումը մի ամբողջ հարյուրամյակ և բարելավել երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակը, շահեկան պայմաններ ստեղծել երկրի արտաքին և ներքին առևտրի զարգացման հարցում:

Բադրի իշխանության գալով՝ Եգիպտոսում սկիզբ դրվեց հարյուրամյա «հայկական շրջանին»: Ինչպես Բադր Ալ-Գամալիի, այնպես էլ նրան հաջորդած հայազգի վազիրների անուններին կցվեց Ալ-Արմանի մակդիրը, ինչը բնորոշում էր նրանց հայկական ծագումը: Բադրի՝ վազիր դառնալուց հետո Ֆաթիմյան խալիֆաների իշխանությունն, ընդհանուր առմամբ, սկսեց ձևական բնույթ կրել, նրանց հեղինակությունը վերականգնվեց միայն անվանապես, քանի որ այդ շրջանից ի վեր իրական իշխանությունը երկրում անցավ վազիրներին: Վազիրի ինստիտուտը Եգիպտոսում որոշակի փոփոխության ենթարկվեց՝ ձեռք բերելով նոր բաղադրիչներ: Ալ-Գամալին ստանձնեց թե՛ վարչական, թե՛ ռազմական և թե՛ քարոզչական պատասխանատվություն:

Բացի այդ, Ֆաթիմյան Եգիպտոսում առաջին անգամ վազիրներն իրավունք ստացան ունենալ իրենց սեփական, անկախ զինված կառույցները, ինչը բացարձակ իշխանության դրսևորում էր: Այդ հանգամանքը նպաստեց հայ վազիրների դիրքերի ամրապնդմանը: Վազիրների անձնական՝ հեծյալ և հետևակ զորախմբերը, մեծամասամբ, կազմված էին հայերից և հայտնի էին որպես «Զույուշիյա» կամ հայ կտրիճների զորախմբեր անվամբ: «Զույուշիայի» զինվորականները բարձր դիրք էին գրավում եգիպտական հասարակության շրջանում և որպես պարգև ստանում էին հողակտորներ /իկտա/: Ռազմական այդ ինստիտուտը պահպանեց իր նշանակությունն ընդհուպ մինչև Ֆաթիմյան խալիֆայության անկումը:

Նշենք, որ Ֆաթիմյան Եգիպտոսի կառավարման համակարգում հայ վազիրների գործունեությունը նպաստեց եգիպտահայ գաղթավայրի կայացմանը: Վերջիններս բարենպաստ պայմաններ ստեղծեցին և մեծապես աջակցեցին, որպեսզի Հայաստանից և այլ շրջաններից արտագաղթող հայերն անվտանգ կերպով հաստատվեն Եգիպտոսում: Բադրը և նրան հաջորդած հայ վազիրները երաշխիքներ ստեղծեցին հայերի՝ որպես զիմմիներ իսլամական հասարակության մեջ ներգրավվելու համար:

Եգիպտահայ գաղթավայրը, նաև Ֆաթիմյան խալիֆաների դրական վերաբերմունքի շնորհիվ, ծաղկում ապրեց: Հայերն ազատորեն դավանում էին իրենց կրոնը, զբաղվում արվեստներով ու արհեստներով: Նրանք Եգիպտոսի տարբեր շրջաններում ունեին սեփական վանքեր ու եկեղեցիներ՝ հակառակ իսլամական այն արգելքին, որը վերաբերում էր իսլամական միջավայրում նոր եկեղեցիների շինարարությանն ու ավերվածների վերակառուցմանը: Նշենք, որ եգիպտահայերի

համար շահեկան եղավ նաև Հայ առաքելական եկեղեցու՝ Եգիպտոսում ծավալած գործունեությունը:

Հատկանշական է, որ արաբական պատմագրությունը լայնորեն արձագանքեց հայ վազիրների շուրջ հարյուրամյա կառավարմանը՝ իր համար հստակեցնելով հայ գործչի կերպարը: Միջնադարյան արաբ պատմիչների՝ մասնավորապես Ալ-Մաքրիզիի, Իբն Խալլիքանի, Կալկաշանդիի և այլոց երկերում Ֆաթիմյան շրջանի հայ պետական և ռազմաքաղաքական գործիչներին հիմնականում բարձր գնահատականներ են տրվել, ի ցույց են դրվել նրանց ռազմական և վարչական կարողությունները, որի լավագույն առհավատչյան Ֆաթիմյան պետության մեջ հայ վազիրների վայելած հարգանքն էր, նրանց շնորհված բարձր տիտղոսները՝ հաղթական իշխանների թագ, բանակների սպարապետ, իշխանության պատիվ, պետության վստահելի, պետության սուր, պետության թագ, իսլամադավանների խնամակալ, հավատացյալների առաջնորդ:

Միջնադարյան իսլամական պետական համակարգի համատեքստում առանձնակի կարևորություն է ներկայացնում Ֆաթիմյան պետության մեջ քրիստոնյա իշխան Վահրամ Պահլավունու՝ լիազոր-վազիր լինելու հանգամանքը, քանի որ «հայկական շրջանի» մյուս բոլոր վազիրները իսլամադավան էին: Իսլամական իրավունքի համաձայն՝ զիմմիներին /իսլամական պետության մեջ ապրող ոչ իսլամադավաններին/ արգելվում էր զբաղեցնել պետական պաշտոններ, ինչպես նաև զենք կրել և ծառայել բանակում: Հատկանշական է, որ Վահրամ Պահլավունու վազիրության շրջանում Եգիպտոսում հայերի թիվը զգալիորեն ավելացավ՝ նպաստելով հակահայկական տրամադրությունների ուժեղացմանը: Պահլավունուն նույնիսկ մեղադրեցին Եգիպտոսում հայկական իշխանություն ստեղծելու գաղտնի մտադրություն ունենալու մեջ: Ֆաթիմյան խալիֆայությունում սկիզբ առած հակահայկական տրամադրություններն ավելի խորացան Եգիպտոսում Այյուբյան դինաստիայի հաստատմամբ: Սալահ Ադ-Դինը ջլատեց Ֆաթիմյան խալիֆայության վերջին հավատարիմ ուժը՝ հայ կտրիճների զորախումբը: «Հայկական շրջանի» /1162թ./, ապա նաև՝ Ֆաթիմյան դինաստիայի անկումից հետո /1171թ./ հայերը սկսեցին ենթարկվել հալածանքների, հայկական վանքերն ու եկեղեցիները փակվեցին, բռնագրավվեցին կամ էլ հանձնվեցին ղպտիներին: Եգիպտոսում Ֆաթիմյան դինաստիայի անկումից հետո հայերը երկրից հիմնականում հեռացան: Նրանց մի մասն իսլամ ընդունեց կամ ձուլվեց ղպտիներին: Այդպիսով, փակվեց հայերի համար մի բեղուն դարաշրջան, որ սկսվել էր Բադր Ալ-Գամալիով և տևել մոտ մեկ դար:

Ամփոփելով աշխատանքում հետազոտվող հիմնախնդիրները՝ հանգում ենք հետևյալ եզրահանգումների.

1. Միջնադարյան իսլամական պետության, մասնավորապես՝ Ֆաթիմյան Եգիպտոսում առաջին անգամ շուրջ հարյուր տարի հայկական տարրը կամ հայ վազիրները վճռորոշ դեր խաղացին երկրի կառավարման համակարգում՝ ինքնիշխան կերպով ղեկավարելով շիական պետությունը:
2. Ֆաթիմյան Եգիպտոսում հայ վազիրների կառավարման շրջանը լավագույնս ի ցույց դրեց այն առանցքային նշանակությունը, որ ունեցել են հայերը ուսումնասիրվող շրջանում Եգիպտոսի քաղաքական, ռազմական, տնտեսական և մշակութային կյանքում:
3. Հայկական տարրի իշխանության գալուց հետո Ֆաթիմյան Եգիպտոսում վազիրի ինստիտուտն էական փոփոխություն կրեց: Եթե մինչև Բադր Ալ-Գամալին վազիրը սոսկ գործադիր իշխանություն ուներ /վազիր ալ-

թանֆիզ/ և կոչվում էր նաև «գրչի վազիր», ապա նրանից հետո վազիր հասկացությունը ձեռք բերեց այլ բովանդակություն: Վազիրները ստանձնեցին նոր գործառույթներ՝ ամբողջությամբ կրելով քաղաքական, ռազմական, վարչական և քարոզչական ոլորտների պատասխանատվությունը: Նրանք գրեթե ինքնիշխան կառավարեցին երկիրը, առանձին դեպքերում նույնիսկ միջամտելով խալիֆայի ընտրությանը, որի արդյունքում երբեմն խախտվում էր իշխանության փոխանցման ժառանգականության սկզբունքը: Փաստորեն, պետության գործադիր իշխանության կառավարումը ստանձնած վազիրները, Բադր Ալ-Գամալիից հետո, սկսեցին կոչվել լիազոր վազիրներ /վուզարա աթ-թաֆուիդ/, սրի վազիրներ /վուզարա աս-սույուֆ/, մեծ վազիրներ /վուզարա ալ-ազամ/:

4. Ֆաթիմյանների իշխանության և հայ վազիրների ինստիտուտի երկարամյա պահպանման գործում էական դերակատարում ունեցավ նաև հայկական ռազմական տարրի առկայությունը: Պատահական չէ, որ դեռևս Բադր Ալ-Գամալիի վազիրության սկզբնական փուլում կազմավորվեց «հայ կտրիճների»՝ «Զույուշիյա» զորամիավորումը, որն իրականացնում էր վազիրների անձնական պաշտպանությունը: «Զույուշիյան», ըստ էության, հայ վազիրների ռազմաքաղաքական հենարանն էր և մեծապես նպաստեց հայ վազիրների քաղաքական դիրքերի ամրապնդմանը:
5. Եգիպտոսում Ֆաթիմյանների կառավարման փուլը, իրավամբ, կարելի է համարել միջնադարում իսլամական հասարակության մեջ կրոնական հանդուրժողականության և համակեցության լավագույն օրինակներից մեկը, որի ապացույցը հայ գործիչների՝ պետական ամենաբարձր պաշտոնների ստանձնումն էր:
6. Հայ վազիրների պաշտոնավարման շրջանում Եգիպտոսում զարկ տրվեց պետական շինարարությանը: Մասնավորապես հայկական ճարտարապետության ավանդույթները լայնորեն օգտագործվեցին շինարարական կառույցներում՝ ձևավորելով յուրահատուկ ոճ: Հայերը զգալի դեր խաղացին Եգիպտոսում արվեստների և արհեստների զարգացման գործում:
7. Ֆաթիմյան Եգիպտոսի կառավարման համակարգում հայ վազիրների գործունեությունը նպաստեց եգիպտահայ գաղթավայրի ընդլայնմանը: Հայերը, որպես էթնոդավանական փոքրամասնություն, իրենց ուրույն դերն ունեցան Եգիպտոսի բարգավաճման գործում:
8. Ֆաթիմյան հայ վազիրների ներգրավվածությունն իսլամական պետական համակարգում և հասարակական գործընթացներում նպաստեց իսլամական պատմագրության մեջ հայի կամ հայ պետական գործչի կերպարի ձևավորմանը: Արաբական պատմագրությունը բարձր է գնահատել Ֆաթիմյան պետության կործանումը կասեցրած հայ գործիչների վաստակը, նրանց ներդրումը Ֆաթիմյան պետության ամրապնդման հարցում:
9. «Հայկական շրջանը» ևս իր էական ազդեցությունն ունեցավ հայ պատմագրության մեջ իսլամի նկատմամբ առկա մոտեցումների ճշգրտման տեսանկյունից՝ ի ցույց դնելով կրոնական հանդուրժողականության նշանակությունը եգիպտահայ գաղթավայրի զարգացման հարցում:

10. Ֆաթիմյան խալիֆայության շրջանը /969-1171թթ./, իրավամբ, կարելի է համարել հայ-արաբական՝ մասնավորապես հայ-եգիպտական միջնադարյան պատմական առնչությունների ամենաբեղուն ժամանակահատվածներից մեկը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1.Բահրամ Ալ-Արմանիի գործունեությունը Եգիպտոսում 1135-1140թթ., Մերձավոր Արևելք, հ.V, Երևան, 2008թ., էջ 26-30:

2.Բադր Ալ-Գամալի Ալ-Արմանիի իշխանությունը Եգիպտոսում 1074-1094թթ., Մերձավոր Արևելք, հ.VI, Երևան, 2009թ., էջ 30-35:

3.Թալաի Իբն Ռուզզիք Ալ-Արմանին (1154-1161թթ.)՝ Ֆաթիմյան ռազմաքաղաքական և մշակութային գործիչ, Կանթեղ, Գիտական հոդվածների ժողովածու, Գիրք 1, Երևան, 2010թ., էջ 188-194:

4.Ֆաթիմյան Եգիպտոսի հայ գաղթավայրը Բադր Ալ-Գամալիի կառավարման շրջանում, Կանթեղ, Գիտական հոդվածների ժողովածու, Գիրք 2, Երևան, 2010թ., էջ 203-208:

АРАКЕЛЯН АРСЕН ОГАНЕСОВИЧ

АРМЯНЕ В ГОСУДАРСТВЕННОЙ СИСТЕМЕ ФАТИМИДСКОГО ЕГИПТА (XI-XIIвв.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02. - "Всемирная история"
Защита состоится 24 Мая 2010г. 13:00 по адресу: 375019, г. Ереван, проспект Маршала Баграмяна 24г., Институт востоковедения, НАН РА

РЕЗЮМЕ

Тема диссертации "Армяне в государственной системе фатимидского Египта (XI-XIIвв.)" посвящена изучению почти столетнему правлению армянских вазиров в фатимидском Египте (1074-1162гг.), их роли и значению в правлении страны, особенностям их деятельности, а также армянской диаспоры Египта в период властвования армянских вазиров.

Тема данной диссертации имеет как научную, так и политическую и практическую значения с точки зрения исследования истории средневекового Египта и особенно армяно-арабских многовековых отношений. Изучение периода властвования армянских вазиров в фатимидском Египте выявляет важнейшую роль армянского фактора, а также особенности воздействия армянского военно-политического и культурного традиций в контексте средневековой исламской общественности. Не случайно изучаемый данный период истории объективно считается также и самой содержательной частью истории армянской диаспоры Египта.

Данная работа по своему содержанию и рассматриваемым вопросам является первым исследованием в армянском востоковедении, где на базе широкого использования арабских источников и соответствующей литературы делается попытка многостороннего анализа всего периода столетнего властвования армянских вазиров в фатимидском Египте, особенности деятельности армянских вазиров, их роль и значение в государственной системе Египта.

Научной новизной работы является многостороннее исследование особенностей военно-политического, социально-экономического и культурного деятельности Афдаля Шахиншаха и в частности Музаффара ибн Бадр аль-Гамаля, Ахмада ибн аль-Афдаля (Абу Али Кутайфата), Яниса аль-Армани и Руззика ибн Талаи (Абу Шуджаа Бадра ад Дина).

Временные рамки диссертации охватывают исторический период второго столетия фатимидской династии в Египте (XI-XIIвв.). Данная часть включает столетний - "армянский период" (1074-1162гг.) правления вазиров в фатимидском Египте, историю армянской диаспоры Египта, а также окончательное падение фатимидской династии в 1171г.

Работа написанна на основе широкого использования источников и исследований на армянском, арабском, английском, русском и французском языках. Исследованию темы способствовали ценные научные работы, статьи и монографии как армянских так и зарубежных авторов.

Диссертация состоит из введения, трех глав (каждая из которых содержит разделы), заключения и списка использованных источников и литературы.

Во введении обосновывается актуальность и важность темы диссертации, формулируются цели и задачи исследования, теоретическое и практическое значение, а также ее научная новизна, дается краткий обзор использованных источников и литературы, разъясняются методологические основы работы.

В первой главе диссертации ("Установление института армянских вазиров в фатимидском Египте (1074-1135гг.)") рассматривается процесс установления фатимидского халифата в Египте, деятельность фатимидского первого армянского вазира Бадр аль-Гамаля аль-Армани (1074-1135гг.) и его сына Афдаля Шахиншаха ибн Бадра аль-Гамали аль-Армани (1094-1121гг.), вазиров Музаффара ибн Бадр аль-Гамаля, Ахмад ибн аль-Афдаля (Абу Али Кутайфата), Яниса (Оганнес) аль-Армани 112-1135гг., а также армянина христианина Ваграма Пахлавуни (Баграм аль-Армани) 1135-1137гг. в периоды их властвования в Египте.

Вторая глава диссертации ("Падение фатимидского халифата и конец института армянских вазиров") посвящена многостороннему исследованию военно-политической, социально-экономической и культурной деятельности Талаи ибн Руззика аль-Армани (1154-1161гг.) и его сына Руззика ибн Талаи (Абу Шуджаа Бадра ад Дина) (1161-1162гг.), а также научному анализу процесса падения фатимидского халифата.

Третья глава диссертации ("Армянская диаспора Египта в эпохе фатимидского халифата") освещает факторы способствующие утверждению в Египте армян, общее социально-политическое состояние египетской армянской диаспоры, численность армян и количество их местопроживаний, занятости армян в разных сферах экономики, а также Армянскую апостольскую церковь, в частности деятельность католикоса Григора Вкаясера в Египте, а также вопросы касательно армянских церквей и монастырей.

В заключении сделанны основные выводы по данной работе.

Обсуждаемые в диссертации тезисы, сделанные анализы и выводы могут быть использованны в исследованиях и лекциях посвященных истории арабских стран, в частности средневековой истории Египта, а также в отдельных трудах посвященных средневековью. Тезисы диссертации могут широко использоваться также в изучениях посвященных армяно-арабским в большинстве случаев армяно-египетским отношениям, в том числе изучениям армянских колоний Среднего Востока.

Основное содержание диссертации нашло отражение в четырех опубликованных работах диссертанта.

ARSEN H. ARAKELYAN

ARMENIANS IN THE STATE SYSTEM OF FATIMID EGYPT /XI-XII/